



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ**

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

**ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՀՐԱՀՐՄԱՆ ԵՎ ԲՈՆՈՒԹՅԱՆ
ԿՈՉԵՐԻ ԴԵՊՔԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՀՐԱՀՐՄԱՆ ԵՎ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԿՈՉԵՐԻ
ԴԵՊՔԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԴԱՏԱԿԱՐԱԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
ԳԼՈՒԽ 1. ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԵՎ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԿՈՉԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԸ	4
§ 1.1. Ատելության խոսքի և բռնության կոչերի քրեականացումը՝ որպես ՀՀ միջազգային պարտավորություն.....	4
§ 1.2. Ատելության և բռնության հրահրման դեպքերի պատշաճ գնահատման միջազգային ստանդարտները: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը	9
ԳԼՈՒԽ 2. ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՆ	22
§ 2.1. Ներպետական օրենսդրության վերլուծությունը.....	22
§ 2.2. Ներպետական պրակտիկայի ուսումնասիրության հիման վրա կատարված արձանագրումները.....	26
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	40

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն ուսումնասիրությունը նպատակ է հետապնդում վերլուծելու ատելության հրահրման և բռնության կոչերի քննության ներպետական պրակտիկան, վերհանելու առկա խնդիրները և ներկայացնելու դրանց լուծմանն ուղղված առաջարկություններ:

Ուսումնասիրության առաջին գլխով անդրադարձ է կատարվում ատելության խոսքի քրեականացման պարտավորությունը սահմանող միջազգային համաձայնագրերին, վերաբերելի այլ միջազգային փաստաթղթերին, այն արարքների շրջանակին, որոնց քրեականացման անհրաժեշտությունն ամրագրվել է նշված փաստաթղթերով: Ներկայացվում են ատելության խոսքի քննությանը վերաբերելի միջազգային չափանիշները՝ հիմնվելով Ռաբաթի գործողությունների ծրագրով նախատեսված թեստի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի վերլուծության վրա:

Երկրորդ գլխով անդրադարձ է կատարվում ներպետական օրենսդրությանը, նոր և նախկին քրեական օրենսգրքերի դրույթներին, որոնցով պատասխանատվություն է նախատեսվում ատելության խոսքի, ներառյալ՝ բռնության կոչերի համար, վերլուծվում է ներպետական դատական պրակտիկան և արձանագրված թերությունների ամփոփման հիման վրա կատարվում են համապատասխան առաջարկություններ:

Կարևոր է արձանագրել, որ աշխատանքը նպատակ չի հետապնդում որևէ կերպ կասկածի տակ դնելու կամ վիճարկելու որևէ դատական ակտի իրավաչափությունը, այլ միայն ուսումնասիրում է, թե որքանով են դատարանները ենթադրյալ ատելության խոսքի դեպքերի քննության և գնահատման ընթացքում հաշվի առել և հիմնվել միջազգային ստանդարտներից բխող չափանիշների վրա:

Սույն ուսումնասիրությունը կատարվել է «Ատելության խոսքի դեմ պայքար հանուն ժողովրդավարական հասարակության բազմակարծության և հանդուրժողականության հաստատման» ծրագրի շրջանակներում՝ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի և «Լիբերալ քաղաքականության ինստիտուտ» հասարակական կազմակերպության կողմից: Ծրագիրն իրականացվում է Հայաստանի Հանրապետությունում Նիդերլանդների Թագավորության դեսպանության օժանդակությամբ: Ուսումնասիրությունը կազմվել է փորձագետի կողմից և կարող է ամբողջությամբ չարտահայտել ՀՀ-ում Նիդերլանդների Թագավորության դեսպանության, «Լիբերալ քաղաքականության ինստիտուտ» հասարակական կազմակերպության և Մարդու իրավունքների պաշտպանի տեսակետները:

ԳԼՈՒԽ 1. ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԵՎ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԿՈՉԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԸ

§ 1.1. Ատելության խոսքի և բռնության կոչերի քրեականացումը՝ որպես ՀՀ միջազգային պարտավորություն

Ատելության հրահրման և բռնության կոչերի կամ քարոզի դեմ պայքարի, ներառյալ՝ քրեական պատասխանատվության միջոցների նախատեսման անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններից և այդ առնչությամբ ՄԱԿ և Եվրոպայի խորհրդի մոնիտորինգային մարմինների և այլ կառույցների կողմից ձևավորած ստանդարտներից (soft law):

Այսպես, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 20-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության ցանկացած քարոզը, որն իրենից ներկայացնում է խտրականության, թշամանքի կամ բռնության հրահրում, պետք է արգելված լինի օրենքով:

«Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի 4-րդ հոդվածով սահմանվում է անդամ պետությունների պարտականությունը՝ որպես օրենքով պատժելի հանցանք նախատեսելու ռասայական գերազանցության կամ ատելության վրա հիմնված գաղափարների տարածումը, ռասայական խտրականության հրահրումը, ցանկացած ռասայի կամ այլ մաշկի գույն կամ էթնիկ ծագում ունեցող անձանց խմբի նկատմամբ բռնությունը կամ դրա հրահրումը, ինչպես նաև ռասիստական գործողություններին օժանդակելը, ներառյալ՝ դրանց ֆինանսավորումը:

Ռասայական խտրականության վերացման կոմիտեի 35-րդ ընդհանուր հանձնարարականում, անդրադառնալով ատելության խոսքի դեմ կիրառելի անհրաժեշտ միջոցներին, կոմիտեն ընդգծել է ոչ միայն քրեական, այլ նաև քաղաքացիական և վարչական իրավունքի կիրառման կարևորությունը և արձանագրել է, որ քրեական պատասխանատվության միջոցները պետք է կիրառվեն միայն ռասիստական ատելության խոսքի առավել ծանր դրսևորումների դեպքում՝ հաշի առնելով, ի թիվս այլնի, կոնկրետ խոսքի ազդեցության բնույթը և ծավալը թիրախավորված անձանց և խմբերի վրա:

Հանձնարարականով առաջարկվում է անդամ պետություններին քրեական պատասխանատվություն սահմանել հետևյալ արարքների համար՝

1. ռասայական կամ էթնիկ գերազանցության կամ ատելության վրա հիմնված գաղափարների տարածումը,

2. անձանց խմբի նկատմամբ ատելության, արհամարհանքի կամ խտրականության հրահրումը՝ պայմանավորված նրանց ռասայական պատկանելությամբ, մաշկի գույնով, ծագումով կամ ազգային կամ էթնիկ պատկանելությամբ,

3. նույն հանգամանքներով պայմանավորված անձին կամ անձանց խմբին ուղղված սպառնալիքները կամ նրանց նկատմամբ բռնության հրահրումը,

4. նույն հանգամանքներով պայմանավորված անձին կամ անձանց խմբին վիրավորելը, ծաղրելը կամ զրպարտելը կամ նրանց նկատմամբ ատելությունը,

արհարմարիանքը կամ խտրականությունն արդարացնելը, երբ դա հանգեցնում է ատելության կամ խտրականության հրահրման,

5. ռասայական խտրականությունն քարոզող կամ հրահրող կազմակերպություններին անդամակցելը կամ նման գործողություններին մասնակցելը:

Կոմիտեն նաև ընդգծել է, որ պատմական փաստերի վերաբերյալ կարծիքի արտահայտումը չպետք է արգելվի կամ որևէ կերպ պատժելի լինի:

Եվրոպայի խորհրդի շրջանակներում կնքված՝ ատելության խոսքի քրեականացման միջազգային պարտավորություն սահմանող հիմնական փաստաթուղթը Կիբերիանցագործությունների մասին կոնվենցիայի՝ համակարգչային համակարգերի միջոցով կատարվող ռասիստական և քսենոֆոբ բնույթի արարքների քրեականացման մասին լրացուցիչ արձանագրությունն է:

Լրացուցիչ արձանագրությամբ սահմանվում է անդամ պետությունների պարտավորությունը՝ քրեականացնելու դիտավորությամբ կատարված հետևյալ արարքները՝

1. համակարգչային համակարգի միջոցով ռասիստական և քսենոֆոբ նյութերի տարածումը կամ այլ ճանապարհով դրանք հանրությանը մատչելի դարձնելը,

2. անձին կամ անձանց խմբին համակարգչային համակարգի միջոցով սպառնալը կատարել ծանր հանցանք՝ պայմանավորված այդ անձի կամ խմբի ռասայական պատկանելությամբ, մաշկի գույնով, ծնունդով կամ ազգային կամ էթնիկ ծագումով, ինչպես նաև կրոնով,

3. համակարգչային համակարգի միջոցով անձին կամ անձանց խմբին հրապարակայնորեն վիրավորելը՝ պայմանավորված այդ անձի կամ անձանց խմբի ռասայական պատկանելությամբ, մաշկի գույնով, ծնունդով կամ ազգային կամ էթնիկ ծագումով, ինչպես նաև կրոնով, ընդ որում, անդամ պետությունները կարող են նման վիրավորանքի համար պատասխանատվություն նախատեսել այն դեպքում, երբ նման վիրավորանքը հանգեցնում է նրան, որ թիրախավորված անձը կամ անձանց խումբը ենթարկվում է ատելության, արհամարանքի կամ ծաղրանքի:

Արձանագրության 1-ին հոդվածով հստակեցվում է, որ «ռասիստական կամ քսենոֆոբ նյութ» տերմինը նշանակում է՝ ցանկացած գրավոր նյութ, նկար կամ գաղափարների կամ տեսությունների այլ ձևով արտահայտում, որը քարոզում, խթանում կամ հրահրում է ատելություն, խտրականություն կամ բռնություն անձի կամ անձանց խմբի նկատմամբ՝ պայմանավորված ռասայական պատկանելությամբ, մաշկի գույնով, ծնունդով կամ ազգային կամ էթնիկ ծագումով, ինչպես նաև կրոնով:

Ատելության խոսքի որոշ դրսևորումների քրեականացման պահանջը բխում է նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա) 8-րդ հոդվածով երաշխավորված անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի և 14-րդ հոդվածով սահմանված խտրականության արգելքի ապահովման անհրաժեշտությունից:¹

Ավելին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) արձանագրել է, որ հանդուրժողականությունը և բոլոր մարդկանց հավասար արժանապատվության նկատմամբ հարգանքը կազմում են ժողովրդավարական և բազմակարծ հասարակության հիստի, ուստի նման հասարակություններում կարող է անհրաժեշտ լինել սահմանափակել բռնություն,

¹ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի «Ատելության խոսքի դեմ պայքարի մասին» թիվ CM/Rec(2022)16 հանձնարարականի նախաբան:

ատելություն կամ անհանդուրժողականություն հրահրող կամ արդարացնող խոսքը՝ պայմանով, որ կիրառված սահմանափակումները կամ պատիժը համաչափ են հետապնդվող իրավաչափ նպատակին:² Պետություններն այս պարագայում կարող են կիրառել անգամ քրեաիրավական բնույթի միջոցներ, որոնք ուղղված կլինեն նման խոսքին համաչափորեն արձագանքելուն: Իսկ այն պարագայում, երբ նման խոսքը հրահրում է բռնություն անհատի, պաշտոնատար անձի կամ բնակչության որևէ խմբի նկատմամբ, պետությունն ունի կարծիքի արտահայտման ազատությանը միջամտելու ավելի մեծ հայեցողություն:³

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի «Ատելության խոսքի դեմ պայքարի մասին» թիվ CM/Rec(2022)16 հանձնարարականով ըստ ծանրության աստիճանի և դրան համապատասխան՝ պետության համարժեք արձագանքի՝ տարանջատվում է ատելության խոսքի 3 տեսակ՝

1. ատելության խոսք, որն արգելվում է քրեական օրենսդրությամբ,

2. ատելության խոսք, որն այն ծանրության չէ, որպեսզի անհրաժեշտ լինի քրեական պատասխանատվության միջոցների կիրառումը, սակայն որը հանգեցնում է քաղաքացիական կամ վարչական պատասխանատվության,

3. արտահայտման վիրավորական դրսևորումներ, որոնք բավարար ծանրության չեն, որպեսզի իրավաչափ սահմանափակումների ենթակա լինեն, սակայն պահանջում են այլընտրանքային արձագանքման միջոցներ, ինչպես օրինակ ատելության խոսքին հակազդող խոսքի կիրառումն է, միջմշակության իրավաստությանը և ըմբռնմանը նպաստող միջոցների ձեռարկումը, կրթական, իրազեկման արշավների իրականացումը և այլն:

Ըստ հանձնարարականի՝ քրեական օրենսդրությունը պետք է կիրառվի միայն որպես վերջին միջոց և միայն ատելության խոսքի առավել ծանր դրսևորումների նկատմամբ:

Հանձնարարականով նախատեսվում է, որ քրեական պատասխանատվություն պետք է նախատեսվի ատելության խոսքի հետևյալ դրսևորումների համար՝

1. ցեղասպանություն, մարդկության դեմ ուղղված հանցագործություններ կամ պատերազմական հանցագործություններ կատարելու հրապարակային հրահրումը,

2. ատելություն, բռնություն կամ խտրականություն հրապարակային կերպով հրահրելը,

3. ռասիստական, քսենոֆոբ, սեքսիստ և հոմոֆոբ կամ տրանսֆոբ սպառնալիքները,

4. ռասիստ, քսենոֆոբ, սեքսիստ և հոմոֆոբ կամ տրանսֆոբ վիրավորանքները՝ Կիբեռհանցագործությունների մասին կոնվենցիայի՝ համակարգչային համակարգերի միջոցով կատարվող ռասիստական և քսենոֆոբ բնույթի արարքների քրեականացման մասին լրացուցիչ արձանագրությամբ սահմանված պայմանների առկայության պարագայում,

5. ցեղասպանության, մարդկության դեմ ուղղված հանցագործությունների և պատերազմական հանցագործությունների հրապարակային ժխտումը կամ արդարացումը,

² Էրբական ընդդեմ Թուրքիայի (Erbakan v. Turkey) գործով 2006 թվականի հուլիսի 6-ի վճիռը, դիմում no. 59405/00, § 56

³ Տես, օրինակ, Մեդիա ՖՄ Ռեհա Ռադիո վե Իլետիսիմ Հիլետիսիմ Հիլետիսիմ Ռադիոյի Ա.Ս. -ն ընդդեմ Թուրքիայի (Medya FM Reha Radyo Ve İletişim Hizmetleri A.Ş. v. Turkey) գործով 2006 թվականի նոյեմբերի 14-ի վճիռը, դիմում no. 32842/02

6. վերոնշյալ կետերով նախատեսված ատելության խոսքի դրսևորումներ, ներառյալ՝ ռասայական գերազանցության կամ ատելության վրա հիմնված գաղափարներ պարունակող նյութեր դիտավորյալ տարածելը:

Ատելության խոսքի քրեականացման անհրաժեշտությունը նախատեսվում է նաև Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովի (ՌԱԵՅ) 15-րդ ընդհանուր քաղաքականության հանձնարարականով, որն ատելության խոսքը բնութագրում է որպես անձի կամ անձանց խմբի նվաստացման, անարգման կամ անձի կամ անձանց խմբի նկատմամբ ատելության քարոզչությունը, խթանումը կամ հրահրումը, ինչպես նաև անձի կամ անձանց խմբի նկատմամբ ոտնձգությունը, վիրավորանքը, բացասական կարծրատիպերի տարածումը, խարանավորումը, սպառնալիքը և վերոնշյալ արտահայտման բոլոր ձևերի արդարացումը՝ պայմանավորված ռասայով, մաշկի գույնով, ծագումով, ազգային կամ էթնիկ պատկանելությամբ, տարիքով, հաշմանդամությամբ, լեզվով, կրոնով կամ համոզմունքով, սեռով, գենդերով, գենդերային ինքնությամբ, սեռական կողմնորոշմամբ և այլ անձնական հատկանիշներով կամ կարգավիճակով:

Ընդհանուր քաղաքականության հանձնարարականի մեկնաբանություններում շեշտվում է, որ վերջինով սահմանվող ատելության խոսքի հասկացությունը չի ներառում խոսքի այնպիսի դրսևորումները, որոնք միայն վիրավորում կամ ցնցում են, ինչպես օրինակ երգիծանքը կամ օբյեկտիվ լրատվությունը, ինչը բխում է Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքից:

Ընդհանուր քաղաքականության հանձնարարականով առաջարկվում է պետություններին քրեական պատասխանատվություն նախատեսել հրապարակային ատելության խոսքի այն դրսևորումների համար, որոնք ուղղված են թիրախավորված խմբերի նկատմամբ բռնություն, ահաբեկում, թշնամանք կամ խտրականություն հրահրելուն կամ ողջամտորեն կարող է ակնկալվել, որ կարող են նման գործողություններ հրահրել: ՌԱԵՅ-ը ևս ընդգծում է, որ քրեական պատասխանատվության միջոցները պետք է կիրառվեն այն պարագայում, երբ նվազ սահմանափակող միջոցների կիրառումն արդյունավետ չի լինի:

Ամփոփելով, կարող ենք արձանագրել, որ ՀՀ միջազգային պարտավորությունները և դրանք մեկնաբանող միջազգային բնույթի փաստաթղթերը ենթադրում են հետևյալ արարքների քրեականացումը՝

1. անձի կամ անձանց խմբի նկատմամբ ատելություն, խտրականություն, թշնամանք կամ բռնություն քարոզելը կամ հրահրելը (այդ թվում՝ նման բովանդակությամբ նյութեր տարածելու կամ հանրությանը հասանելի դարձնելու միջոցով)՝ պայմանավորված ռասայական պատկանելությամբ, մաշկի գույնով, ծագումով, ազգային կամ էթնիկ պատկանելությամբ, սեռով, և այլ անձնական բնույթի հատկանիշներով կամ կարգավիճակով, ներառյալ՝ ռասայական գերազանցության կամ ատելության վրա հիմնված գաղափարներ տարածելը,

2. նույն հանգամանքներով պայմանավորված անձի կամ անձանց խմբի նկատմամբ բռնությունը, ատելությունը կամ խտրականությունն արդարացնելը, եթե դա հանգեցնում է ատելության կամ խտրականության հրահրման,

3. նույն հանգամանքներով պայմանավորված անձին կամ անձանց խմբին սպառնալիք, վիրավորելը, ծաղրելը կամ զրպարտելը, եթե դա հանգեցնում է ատելության կամ խտրականության հրահրման,

4. վերոնշյալ արարքները համակարգչային համակարգի միջոցով կատարելը,

4. նշված գործողություններին օժանդակելը, ներառյալ՝ դրանք ֆինանսավորելը,

5. ռասայական խտրականություն քարոզող կամ հրահրող կազմակերպություններին անդամակցելը կամ նման գործողություններին մասնակցելը,

6. ցեղասպանություն, մարդկության դեմ ուղղված հանցագործություններ կամ պատերազմական հանցագործություններ կատարելուն հրապարակային կերպով հրահրելը, դրանք հրապարակային կերպով ժխտելը կամ արդարացնելը:

Միաժամանակ, քրեականացմանը զուգահեռ պետությունը պարտավոր է ապահովելու ատելության խոսքին վերաբերելի ներքին օրենսդրության արդյունավետ կիրառումը:

Այսպես, Ռասայական խտրականության վերացման կոմիտեի 15-րդ ընդհանուր հանձնարարականի համաձայն՝ անդամ պետությունները պետք է ոչ միայն պատասխանատվություն նախատեսեն կոնվենցիայի 4-րդ հոդվածով նախատեսված արարքների համար, այլ նաև ապահովեն դրանց արդյունավետ կիրառումը:

Ավելին, Կոմիտեի 35-րդ ընդհանուր հանձնարարականով նշվում է, որ անկախ, անկողմնակալ և տեղեկացված դատական մարմինները առանցքային են՝ ապահովելու համար, որ ատելության խոսքի անհատական գործերի փաստերի գնահատումն ու իրավական որակումը իրականացվեն մարդու իրավունքների միջազգային ստանդարտներին համապատասխան: Այս առնչությամբ կոմիտեն մտահոգություն է հայտնում ատելության խոսքի դեմ պայքարի նպատակով սահմանված դրույթները խոսքի ազատության սահմանափակման նպատակով օգտագործելու պրակտիկայի առնչությամբ, որը վնասում է այդ թվում «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայով պաշտպանվող խմբերի իրավունքներին: Կոմիտեն ընդգծում է, որ ռասիստական խոսքի մշտադիտարկմանը և դրա դեմ պայքարին ուղղված միջոցները չպետք է որպես պատրվակ օգտագործվեն անարդարության դեմ բողոքը, սոցիալական դժգոհությունը կամ ընդդիմության խոսքը սահմանափակելու համար:

Նմանապես, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2022)16 բանաձևով ևս արձանագրվել է անդամ պետությունների կողմից արդյունավետ միջոցների ձեռնարկման անհրաժեշտությունը՝ բացառելու համար ատելության խոսքի դեմ պայքարին ուղղված օրենսդրության չարաշահումը, հատկապես՝ քաղաքական երկխոսությունը և քննադատությունը, քաղաքական ընդդիմադիրների, ինչպես նաև փոքրամասնություններին պատկանող անձանց կարծիքի արտահայտման ազատությունը սահմանափակելու նպատակով: Հանձնարարականով ընդգծվել է ատելության խոսքի բոլոր դեպքերի արդյունավետ քննության ապահովումը:

ՌԱԵՀ-ը 15-րդ ընդհանուր քաղաքականության հանձնարարականում ևս կարևորել է թե՛ այնպիսի միջոցների ձեռնարկումը, որոնք կկանխեն ատելության խոսքի համար պատասխանատվություն նախատեսող դրույթների չարաշահումը, ներառյալ՝ քաղաքական ընդդիմությանը, ինչպես նաև պետական քաղաքականության քննադատությունը և կրոնական համոզմունքները ճնշելու նպատակով, և թե՛ իրավապահ մարմինների աշխատակիցների, դատախազների և դատավորների արդյունավետ վերապատրաստումը, որը թույլ կտա նրանց արդյունավետ կերպով քննել ատելության խոսքի դեպքերը:

§ 1.2. Ատելության և բռնության հրահրման դեպքերի պատշաճ գնահատման միջազգային ստանդարտները: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը

Նկատի ունենալով, որ ատելության կամ բռնության հրահրման համար քրեական պատասխանատվության միջոցների կիրառումը ցանկացած պարագայում ենթադրելու է կարծիքի արտահայտման ազատության իրավունքի սահմանափակում՝ միջազգային տարբեր առանձինների և դերակատարների կողմից բազմիցս փորձեր են կատարվել սահմանելու այնպիսի չափանիշներ, որոնք հնարավորություն կտան յուրաքանչյուր առանձին դեպքի առնչությամբ որոշելու ատելության խոսքի և կարծիքի արտահայտման ազատության իրավունքով պաշտպանվող իրավաչափ խոսքի սահմանը և կիրառելու համաչափ ու անհրաժեշտ միջոցներ, որոնք չեն հանգեցնի նշված իրավունքի խախտմանը:

Այսպես, օրինակ, Կարծիքի արտահայտման ազատության իրավունքի խթանման և պաշտպանության հարցերով ՄԱԿ հատուկ գեկուցողի՝ 2012 թվականի սեպտեմբերի 7-ի զեկուլյցում ատելության խոսքի կամ բռնության հրահրման քննության առնչությամբ նշվում է, որ հետևյալ հանգամանքները էական են և պետք է հաշվի առնվեն որոշելիս՝ արդյոք կոնկրետ խոսքը կարող է համարվել ատելության հրահրում՝

1. տվյալ խոսքի հետևանքով բռնության առաջացման իրական կամ անխուսափելի վտանգի առկայությունը,
2. արտահայտությունն արած անձի դիտավորությունը՝ հրահրել խտրականություն, թշնամանք կամ բռնություն,
3. դատարանի կողմից այն կոնտեքստի մանրամասն դիտարկումը, որում արվել է տվյալ արտահայտությունը:

Նշված հանգամանքները կարևորվել են՝ ելնելով նրանից, որ միջազգային իրավունքն արգելում է խոսքի որոշակի դրսևորումները ոչ թե դրանց բովանդակության, այլ հետևանքների համար, քանի որ այն, ինչ խիստ վիրավորական է մեկ համայնքում, կարող է այդպիսին չլինել մյուսում: Համապատասխանաբար, կոնտեքստուալ գնահատման ընթացքում պետք է հաշվի առնվեն բազմաթիվ հանգամանքներ, ներառյալ՝ թիրախային խմբի նկատմամբ խտրականության առկայությունը, խոսքի տոնայնությունն ու բովանդակությունը, ատելություն հրահրող անձի հատկանիշները և խոսքի տարածման միջոցը: Օրինակ, անհատի կողմից ֆեյսբուքյան օգտատերերի սահմանափակ խմբի շրջանակում տարածած խոսքը չունի նույն ազդեցությունը, ինչպիսին այն հայտարարությունը, որը հրապարակվել է հանրաճանաչ կայքում:⁴

Ատելության խոսքի ծանրությունը գնահատելու առավել լայն տարածված չափանիշները սահմանված են Ռաբաթի գործողությունների ծրագրով, համաձայն որի՝ միայն խոսքի առավել ծանր դրսևորումները պետք է համարվեն ատելության հրահրում: Ատելության հրահրման ծանրության գնահատման համար կազմվել է 6 մասից բաղկացած թեստ, որը կիրառելի է այն պարագայում, երբ անհրաժեշտ է որոշել՝ արդյոք կոնկրետ խոսքը կարող է համարվել հանցանք: Այդ 6 հանգամանքներն են՝

1. **կոնտեքստը**, որը կարևոր է գնահատելիս՝ արդյոք կոնկրետ արտահայտությունները կարող են թիրախավորված խմբի նկատմամբ հրահրել

⁴ Տե՛ս հետևյալ հղումով <https://www.palermo.edu/cele/pdf/SRs-Report.pdf> (անգլերեն):

խտրականություն, թշնամանք կամ բռնություն: Կոնտեքստի վերլուծությունը ենթադրում է տվյալ խոսքի դիտարկում դրա տարածման պահին առկա սոցիալական կամ քաղաքական համատեքստի լույսի ներքո:

2. **խոսքը տարածողի՝ հասարակությունում ունեցած դիրքը կամ կարգավիճակը**, ներառյալ՝ նրա դերը այն լսարանում, որին ուղղվում կամ որի ներկայությամբ ասվում է խոսքը,

3. **դիտավորությունը**. գործողությունների ծրագրի համաձայն՝ ատելության հրահրման արարքը ենթադրում է դիտավորության առկայություն: Հանցավոր ինքնավստահությամբ կամ անփութությամբ արարքի կատարումը բավարար չէ այն «Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 20-րդ հոդվածի իմաստով հանցանք համարելու համար, քանի որ նշված հոդվածով նախատեսվում է ատելություն «հրահրելը» կամ «քարոզելը» և ոչ թե պարզապես նյութը «տարածելը»,

4. **բովանդակությունը և ձևը**, որոնց վերլուծությունը կարող է ներառել այն հանգամանքները, թե որքանով է տվյալ խոսքը սադրիչ կամ ուղիղ եղել, ինչպես նաև խոսքի արտահայտման ձևը, ոճը, փաստարկների բնույթը կամ տարբեր փաստարկների միջև հավասարակշռումը և այլն,

5. **խոսքի տարածումը**, որը վերաբերում է տվյալ խոսքի հասանելիությանը, դրա հանրային բնույթին և այդ խոսքի լսարանի չափին: Այս առումով կարևոր է դիտարկել՝ արդյոք խոսքը հանրային է եղել, խոսքի տարածման ինչ միջոցներ են օգտագործվել (օրինակ՝ թռուցիկներ կամ հանրաճանաչ լրատվամիջոցով կամ համացանցով հեռարձակում), տարածման հաճախականությունը, քանակը, արդյոք լսարանը միջոցներ է ունեցել տվյալ հրահրման հիման վրա գործողություններ կատարելու, արդյոք հայտարարությունը կամ նյութը շրջանառվել է սահմանափակ անձանց շրջանում, թե հասանելի է եղել լայն հանրությանը և այլն,

6. **հավանականությունը, ներառյալ անխուսափելիությունը**. ատելության հրահրումը, որպես այդպիսին, ձևական հանցակազմ է: Ատելության հրահրման արարքի առկայության համար պարտադիր չէ, որ խոսքի միջոցով քարոզված արարքները կատարվեն, սակայն որոշակի ռիսկի կամ վտանգի առկայությունն այնուամենայնիվ պետք է նույնականացվի: Սա նշանակում է, որ դատարանները պետք է գնահատեն, որ առկա է եղել ողջամիտ հավանականություն, որ խոսքը կարող էր հանգեցնել թիրախավորված խմբի նկատմամբ գործողությունների կատարմանը՝ ճանաչելով նման պատճառահետևանքային կապի առավելապես ուղղակի լինելը:

Ռաբաթի գործողությունների ծրագրով նաև նշվում է, որ ներպետական դատարանները պետք է պարբերաբար վերապատրաստվեն և տեղեկացվեն ատելության հրահրմանը վերաբերելի միջազգային ստանդարտների մասին, քանի որ նման գործերի քննության ընթացքում դատարանները պետք է խոսքի մարամասն վերլուծություն իրականացնեն՝ հիմնվելով լավ մշակված թեստի վրա, որը թույլ կտա յուրաքանչյուր դեպքում գնահատելու կամ որոշելու կարծիքի արտահայտման ազատության իրավունքով պաշտպանվող և դրա պաշտպանությունից դուրս գտնվող արտահայտությունների և խոսքի սահմանը:⁵

Ռաբաթի գործողությունների ծրագրով սահմանված թեստի կիրառելիությունն ուղղակիորեն ընդգծվել է Ռասայական խտրականության վերացման կոմիտեի թիվ 35 ընդհանուր հանձնարարականով, ինչպես նաև հաշվի է առնվել մի շարք այլ մարմինների կողմից՝ նմանատիպ չափանիշներ սահմանելիս:

⁵ St' u հետևյալ հղումով՝ <https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/G13/101/48/PDF/G1310148.pdf?OpenElement> (անգլերեն)

Այսպես, ՌԱԵՅ թիվ 15 ընդհանուր քաղաքականության հանձնարարականի մեկնաբանությունների համաձայն՝ հրահրումը ենթադրում է կա՛մ խոսքի հեղինակի հստակ դիտավորության, կա՛մ բռնության, ահաբեկման, թշնամանքի կամ խտրականության գործողությունների կատարման անխուսափելի ռիսկի առկայություն:

Մեկնաբանություններով նշվում է, որ նման ռիսկի գնահատման համար անհրաժեշտ է հաշվի առնել մի շարք հանգամանքներ, որոնք հիմնականում արտացոլված են Ռաբաթի գործողությունների ծրագրում, միաժամանակ, ՌԱԵՅ-ի դրսևորած մոտեցումը տարբերվում է Ռաբաթի գործողությունների ծրագրից նրանով, որ այս պարագայում դիտավորության առկայությունը պարտադիր չէ և արարքի կատարումը հնարավոր է նաև հանցավոր ինքնապատահության դեպքում, այսինքն այն պարագայում, երբ ողջամտորեն կարելի է ակնկալել, որ նման խոսքը կարող է հանգեցնել բռնության, ահաբեկման, թշնամանքի կամ խտրականության:

Ուստի, մեկնաբանություններով սահմանվում են ատելության խոսքի ծանրության գնահատման համար կարևորություն ունեցող հետևյալ հանգամանքները.

1. կոնտեքստը, որում ատելության խոսքն օգտագործվել է, մասնավորապես՝ արդյոք հասարակությունում արդեն իսկ առկա է սոցիալական լարված իրավիճակ, որի հետ որոշակիորեն կապված է ատելության խոսքը,

2. ատելության խոսքը օգտագործող անձի կողմից այլոց վրա ներգործելու կարողությունը (օրինակ՝ քաղաքական, կրոնական կամ համայնքային գործիչ լինելու պատճառով),

3. կիրառված լեզվի բնույթը և սաստկությունը (օրինակ՝ արդյոք այն սադրող է և ուղղակի, ներառում է ապատեղեկատվության, բացասական կարծրատիպերի կամ խարանավորման կիրառում, կամ արդյոք այլ կերպ կարող է հրահրել բռնություն, ահաբեկում, թշնամանք կամ խտրականություն),

4. կոնկրետ արտահայտությունների համատեքստը (արդյոք դրանք եզակի դեպքեր են, թե օգտագործվել են մի քանի անգամ, և արդյոք կարող է համարվել, որ դրանք հավասարակշռվել են նույն կամ այլ անձի այլ հայտարարություններով, հատկապես՝ բանավեճի ընթացքում),

5. խոսքի տարածման համար օգտագործված միջոցը կամ լրատվամիջոցը (արդյոք այն կարող է անմիջապես առաջ բերել լսարանի/հանդիսատեսի արձագանքը),

6. լսարանի բնույթը (արդյոք արդյոք առկա են միջոցներ կամ հակում կամ ընկալունակություն՝ ներգրավվելու բռնության, ահաբեկման, թշնամանքի կամ խտրականության մեջ):

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին անդրադառնալու նպատակով նախ անհրաժեշտ է արձանագրել, որ Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից: (...)

2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են

ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով»:

Եվրոպական դատարանը բազմիցս արձանագրել է, որ կարծիքի արտահայտման ազատությունը ժողովրդավարական հասարակության կարևորագույն հիմնաքարերից է և դրա զարգացման առանցքային նախապայմաններից մեկն է⁶: Կարևոր է, որ կարծիքի արտահայտման ազատությունը կիրառելի է ոչ միայն այնպիսի տեղեկության կամ գաղափարների նկատմամբ, որոնք վիրավորական չեն և դրական լույսի ներքո են ընկալվում, այլ նաև այնպիսի տեղեկության և գաղափարների, որոնք վիրավորում են, ցնցում կամ անհանգստացնում. այդպիսին են բազմակարծության, հանդուրժողականության և լայնախոհության պահանջները, առանց որոնց չի կարող գոյություն ունենալ «ժողովրդավար հասարակություն»⁷:

Միաժամանակ, ինչպես բխում է Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետից, կարծիքի արտահայտման ազատության իրավունքը բացարձակ չէ և կարող է սահմանափակվել, և Եվրոպական դատարանը նշել է, որ նշված դրույթով նախատեսված սահմանափակման հիմքերը պետք է նեղ մեկնաբանվեն և սահմանափակման անրաժեշտությունը պետք է համոզիչ կերպով ներկայացվի:⁸

Նկատի ունենալով կարծիքի արտահայտման ազատության կարևորությունը՝ վերջինիս սահմանափակումները պետք է կիրառվեն միայն «հրատապ սոցիալական անհրաժեշտության» դեպքում (pressing social need)⁹, իսկ քրեաիրավական միջոցները կիրառվեն միայն ծայրահեղ դեպքերում, երբ ներգործության այլ միջոցները չէին կարող արդյունավետ լինել:

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրությունը թույլ է տալիս արձանագրել, որ ատելության կամ բռնության հրահրման պարագայում կարծիքի արտահայտման ազատության սահմանափակումների իրավաչափությունը գնահատելիս Եվրոպական դատարանը հիմնականում հաշվի է առնում հետևյալ հանգամանքները կամ դրանց մի մասի համակցությունը.

1. Խոսքի բովանդակությունը և ձևը, որը ներառում է նաև դրա կառուցվածքը, կիրառված բառամթերքը, տոնայնությունը և այլն: Այս համատեքստում Եվրոպական դատարանը հատկապես դիտարկում է այն հանգամանքը, թե արդյոք խոսքը ճիշտ մեկնաբանելու և ընդհանուր համատեքստում դիտարկելու պարագայում կարող է համարվել բռնության ուղղակի կամ անուղղակի կոչ կամ բռնության, ատելության կամ անհանդուրժողականության արդարացում: Այս հարցը դիտարկելիս Եվրոպական դատարանը հատկապես զգայուն է խմբերին

⁶ Հենդիսայդն ընդդեմ Միացյալ Թագավորության (Handyside v. the United Kingdom) գործով 1976 թվականի դեկտեմբերի 7-ի վճիռը, դիմում no. 5493/72, § 49

⁷ Աքսել Սպրինգեր ԱԳ-ն ընդդեմ Գերմանիայի (Axel Springer AG v. Germany) (ՄՊ) գործով 2012 թվականի փետրվարի 7-ի վճիռը, դիմում no. 39954/08, § 78

⁸ Տե՛ս, օրինակ, Սուլասը և այլք ընդդեմ Ֆրանսիայի (Soulas et Autres c. France) գործով 2008 թվականի հուլիսի 10-ի վճիռը, դիմում no. 15948/03, §35

⁹ Տե՛ս, օրինակ, Օզգուր Գունդեմ ընդդեմ Թուրքիայի (Ozgur Gundem v. Turkey) գործով 2000 թվականի մարտի 16-ի վճիռը, դիմում no. 23144/93, § 57, Ստերն Տոլատսն ու Ռուրա Կապելլերան ընդդեմ Իսպանիայի (Stern Taulats and Roura Capellera v. Spain) գործով 2018 թվականի մարտի 3-ի վճիռը, դիմումներ nos. 51168/15 և 51186/15, §§ 30-31

ուղղված կատեգորիկ հայտարարությունների նկատմամբ, ինչպես օրինակ՝ Էթնիկ, կրոնական և այլ հիմքերով:¹⁰

Անդրադառնալով խոսքի ոճին, օգտագործված արտահայտությունների բնույթին՝ Եվրոպական դատարանը մի շարք դեպքերում արձանագրել է, որ Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածով պաշտպանվում է ոչ միայն խոսքի բովանդակությունը, այլև դրա ոճը, որը ևս կազմում է հաղորդակցության մասը: Որոշ դեպքերում ոճը ևս Եական նշանակություն է ունեցել Եվրոպական դատարանի վերլուծությունում՝ նկատի ունենալով, որ հեղինակները կարող են խոսքը կամ նյութը առավել կամ նվազ ազդեցիկ դարձնել ոճական լուծումների միջոցով¹¹: Անդրադառնալով, մասնավորապես, երգիծական ոճին՝ Եվրոպական դատարանը նշել է, որ երգիծանքը գեղարվեստական արտահայտման և սոցիալական մեկնաբանության միջոց է, որը չափազանցության և իրականության խեղաթյուրման միջոցով ձգտում է սադրել և այդպիսով կարող է նպաստել հանրային բանավեճին¹²:

2. **Սոցիալական կոնտեքստը**, այսինքն՝ այն սոցիալական իրադրությունը, որի պայմաններում խոսքն արվել է¹³: Եթե արտահայտությունները կամ խոսքն արվել է լարված քաղաքական կամ սոցիալական իրադրության պայմաններում, Եվրոպական դատարանն ընդհանուր առմամբ ընդունում է, որ ենթադրյալ ատելության խոսք պարունակող արտահայտությունների կատարման պարագայում որոշակի միջամտությունը կարող է արդարացված լինել:¹⁴ Միաժամանակ, որոշ դեպքերում, երբ քրեական վարույթը նախաձեռնվել է վիճարկվող հայտարարությունների կատարումից տարիներ անց, Եվրոպական դատարանը շեշտել է, որ տվյալ հայտարարությունները կատարելու ժամանակ առկա սոցիալական իրադրությունը պետք է դիտարկվի քրեական վարույթը այդ իրադարձություններից տարիներ անց հարուցված լինելու լույսի ներքո¹⁵,

3. Այն, թե արդյոք արված արտահայտությունները վերաբերել են **հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցի և որևէ կերպ կազմել են այդ հարցի շուրջ հանրային կամ քաղաքական երկխոսության մի մասը** (contribution to a public debate): Ընդ որում, Եվրոպական դատարանի կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ ինչպես հանրային շահին առնչվող/հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ արված հայտարարությունների, հրապարակումների, տարածված նյութերի, այնպես էլ քաղաքական բանավեճի, քաղաքական բնույթի քննադատության և երկխոսության պարագայում խոսքի իրավաչափ սահմանափակման շրջանակը բավականին նեղ է, և այդ սահմանափակումը պետք է ունենա ծանրակշիռ պատճառներ:¹⁶ Եվրոպական դատարանը շեշտել է, որ ժողովրդավարական հասարակությունում ազատ

¹⁰ Երկիզիա Ալմանդոզ ընդդեմ Իսպանիայի (Erkizia Almandoz v. Spain) գործով 2021 թվականի հունիսի 22-ի վճիռը, դիմում no. 5869/17, § 40

¹¹ Տե՛ս, օրինակ, Սուլասը և այլք ընդդեմ Ֆրանսիայի (Soulas et Autres c. France) գործով 2008 թվականի հուլիսի 10-ի վճիռը, դիմում no. 15948/03, § 41

¹² Կաբոջլու և Օրանը ընդդեմ Թուրքիայի (Kaboglu and Oran v. Turkey) գործով 2018 թվականի հոկտեմբերի 30-ի վճիռը, դիմումներ nos. 1759/08, 50766/10 և 50782/10, § 79

¹³ Տե՛ս, օրինակ, Սուլասը և այլք ընդդեմ Ֆրանսիայի (Soulas et Autres c. France) գործով 2008 թվականի հուլիսի 10-ի վճիռը, դիմում no. 15948/03, §§ 33, 41, 43, Էրբական ընդդեմ Թուրքիայի (Erbakan v. Turkey) գործով 2006 թվականի հուլիսի 6-ի վճիռը, դիմում no. 59405/00, § 58

¹⁴ Երկիզիա Ալմանդոզ ընդդեմ Իսպանիայի (Erkizia Almandoz v. Spain) գործով 2021 թվականի հունիսի 22-ի վճիռը, դիմում no. 5869/17, § 40

¹⁵ Էրբական ընդդեմ Թուրքիայի (Erbakan v. Turkey) գործով 2006 թվականի հուլիսի 6-ի վճիռը, դիմում no. 59405/00, §§ 58, 67-68, 70

¹⁶ Տե՛ս, օրինակ, Գունդուզ ընդդեմ Թուրքիայի (Gunduz v. Turkey) գործով 2003 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռը, դիմում no. 35071/97, § 43

քաղաքական բանավեճի պաշտպանությունը առանցքային կամ հիմնարար նշանակություն ունի:¹⁷

4. **Հավանականությունը**, որ նման խոսքը կարող էր հանգեցնել բռնության կամ ատելություն, անհանդուրժողականություն, թշնամանք առաջացնել, ուղղակի կամ անուղղակի վնաս պատճառել¹⁸: Նշված հանգամանքի գնահատման համար Եվրոպական դատարանը տարբեր դեպքերում կարևորել է՝

- արտահայտությունն արած անձի դերը և ընկալումը հասարակությունում,
- խոսքի հասանելիությունը, այն, թե հանրության որքանով լայն շրջանակի է այն հասանելի եղել, ինչպես նաև որքանով լայն լսարանի է ուղղված եղել (Սուլասը և այլոք ընդդեմ Ֆրանսիայի գործով, օրինակ, Եվրոպական դատարանը մատնանշել է, որ խնդրո առարկա հոդվածը գրված է եղել պարզ և ընթերցողին հասանելի ու ծանոթ լեզվով՝ այդպիսով ուղղված լինելով լայն լսարանի¹⁹):

5. Ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն կամ բռնություն քարոզելու **դիտավորության առկայությունը**: Տագինը և Հոլսեյնովն ընդդեմ Ադրբեջանի գործով Եվրոպական դատարանն արձանագրել է, որ ներպետական դատարանները պարտավոր էին դիտարկել հոդվածի հեղինակի դիտավորությունը և այն հանգամանքը, թե արդյոք նրա նպատակները չէին արդարացնում սադրանքի և չափազանցության գործածումը:²⁰ Դիտավորությունը գնահատելիս Եվրոպական դատարանը կարևորում է նաև այն հանգամանքը, թե ինչ պայմաններում են կոնկրետ արտահայտություններն արվել: Այսպես, օրինակ, այն դեպքում, երբ անձը պատասխանատվության է ենթարկվել ուղիղ հեռարձակման ընթացքում բանավոր արված վիրավորական արտահայտությունների համար, Եվրոպական դատարանը էական է համարել այն, որ ուղիղ հեռարձակման պարագայում դիմողը հնարավորություն չի ունեցել վերաձևակերպելու կամ հստակեցնելու արդեն իսկ արված արտահայտությունը մինչև այն հասանելի կդառնար հանրությանը:²¹

6. **Այն, թե ում է ուղղված խոսքը**, որքանով է այդ խոսքի հասցեատերը (հասցեատերերը) կամ թիրախավորված խումբը խոցելի տվյալ հասարակությունում: Եվրոպական դատարանը շեշտել է, որ քաղաքական գործիչների պարագայում թույլատրելի քննադատության շրջանակն ավելի լայն է, քան մասնավոր անձանց դեպքում: Քաղաքական գործիչներն իրենց գործունեությամբ անխուսափելիորեն և գիտակցաբար հասանելի են դարձնում իրենց ինչպես լրագրողների, այնպես էլ քաղաքացիների «վերահսկողությանը»:²² Ավելին, կառավարության պարագայում թույլատրելի քննադատության շրջանակը նույնիսկ ավելի լայն է, քան քաղաքական գործիչների դեպքում, քանի որ ժողովրդավարական հասարակությունում կառավարության գործողությունները և անգործությունը պետք է ոչ միայն օրենսդիր

¹⁷ Երբականն ընդդեմ Թուրքիայի (Erbakan v. Turkey) գործով 2006 թվականի հուլիսի 6-ի վճիռը, դիմում no. 59405/00, § 55

¹⁸ Երկիզիա Ալմանդոզն ընդդեմ Իսպանիայի (Erkizia Almandoz v. Spain) գործով 2021 թվականի հուլիսի 22-ի վճիռը, դիմում no. 5869/17, § 40, Ֆերետն ընդդեմ Բելգիայի (Ferret c. Belgique) գործով 2009 թվականի հուլիսի 16-ի վճիռը, դիմում no. 15615/07, §69

¹⁹ Տե՛ս, օրինակ, Սուլասը և այլք ընդդեմ Ֆրանսիայի (Soulas et Autres c. France) գործով 2008 թվականի հուլիսի 10-ի վճիռը, դիմում no. 15948/03, §39

²⁰ Տագինն ու Հոլսեյնովն ընդդեմ Ադրբեջանի (Tagiyev and Huseynov v. Azerbaijan) գործով 2019 թվականի դեկտեմբերի 5-ի վճիռ, դիմում no. 13274/08, § 47

²¹ Գունդուզն ընդդեմ Թուրքիայի (Gunduz v. Turkey) գործով 2003 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռը, դիմում no. 35071/97, § 49

²² Ստերն Տոլատսն ու Դուրա Կապելլերան ընդդեմ Իսպանիայի (Stern Taulats and Roura Capellera v. Spain) գործով 2018 թվականի մարտի 3-ի վճիռը, դիմումներ nos. 51168/15 և 51186/15, § 40

և դատական իշխանությունների, այլ նաև հասարակական կարծիքի ուշադրության առարկան լինեն: Ընդ որում, կառավարության գերիշխող դիրքը ենթադրում է, որ այն պետք է զգուշավորություն ցուցաբերի քրեաիրավական միջոցների դիմելու հարցում, հատկապես երբ առկա են այլ միջոցներ, որոնցով հնարավոր է արձագանքել անարդարացի քննադատությանը²³:

Հարկ է նկատել, որ վերոնշյալ հանգամանքները պետք է դիտարկվեն համակցված կերպով և համադրվեն, այլ ոչ թե հաշվի առնվի դրանցից մեկը՝ մյուսներից առանձին վերցված²⁴: Ընդ որում, Եվրոպական դատարանը ոչ միայն անդրադառնում է վերոնշյալ հանգամանքներին, այլև միջամտության իրավաչափությունը գնահատելու տեսանկյունից կարևորում՝ արդյոք ներպետական դատարանները ևս հաշվի են առել այդ հանգամանքները կամ դրանց համակցությունը:²⁵ Այսպես, օրինակ, Տագիևը և Հուսեյնովն ընդդեմ Ադրբեջանի գործով Եվրոպական դատարանը, արձանագրելով, որ դիմողի հողվածում տեղ գտած որոշ դիտարկումները կարող են իսլամի որոշ հետևորդների կողմից դիտարկվել որպես իսլամի մարգարեի և Եվրոպայում բնակվող մուսուլմանների նկատմամբ «հարձակում» և այդպիսով ունակ են հարուցելու կրոնական ատելություն, կարևոր է համարել այն հանգամանքը, որ ներպետական դատարանները չեն իրականացրել խոսքի պատշաճ գնահատում, և չեն ներկայացրել վերաբերելի և բավարար պատճառներ, որոք կարդարացնեին անձի կարծիքի արտահայտման ազատության սահմանափակումը:

Եվրոպական դատարանը խնդրահարույց է համարել նաև այն, որ ներպետական դատարանները սահմանափակել են իրենց վերլուծությունը դատալեզվաբանական և իսլամագիտական փորձաքննության եզրահանգումներով՝ առանց բացատրելու, թե ինչու են կոնկրետ արտահայտությունները համարվել կրոնական ատելություն և թշնամանք հրահրող: Ավելին, ներպետական դատարանները չեն դիտարկել խնդրո առարկա արտահայտությունները հողվածի ընդհանուր համատեքստում և չեն վերլուծել հեղինակի դիտավորության առկայությունը, արդյոք հողվածն առնչվել է հարային շահին վերաբերող հարցի և այլ վերաբերելի հանգամանքները:²⁶

Եվրոպական դատարանի վերլուծությունն առավել արդյունավետ կերպով ներկայացնելու համար անհրաժեշտ ենք համարում ավելի մանրամասն անդրադառնալ Սավվա Տերենտյան ընդդեմ Ռուսաստանի գործին, որով դիմողը դատապարտվել է տեղական լրատվամիջոցներից մեկի գրասենյակում տեղի ունեցած խուզարկության վերաբերյալ հաղորդագրության մեկնաբանություններում ոստիկանների հասցեին հետևյալ մեկնաբանությունը կատարելու համար. «Ես համաձայն չեմ այն մտքի հետ, որ «ոստիկանության աշխատակիցները դեռ գործում են իշխանություն ունեցողների ձեռքում կոշտ փայտիկ լինելու մտածելակերպով:» (...) նրանց հոգեբանությունն անբուժելի է: Խոզը միշտ մնում է խոզ: (...) Հիանալի կլիներ, եթե յուրաքանչյուր ռուսական քաղաքի կենտրոնում, գլխավոր հրապարակին (...) վառարան լիներ, ինչպես Աուշվիցում, որտեղ արարողակարգով ամեն օր, իսկ ավելի լավ է, օրը երկու անգամ (օրինակ, կեսօրին և կեսգիշերին) անհավատարիմ

²³ Ստոմախինն ընդդեմ Ռուսաստանի (Stomakhin v. Russia) գործով 2018 թվականի մայիսի 9-ի վճիռը, դիմում no. 52273/07, § 89

²⁴ Պերինչեկն Շվեյցարիայի (ՄՊ) (Perinçek v. Switzerland) գործով 2015 թվականի հոկտեմբերի 15-ի վճիռը, դիմում no. 27510/08, § 208

²⁵ Տե՛ս, օրինակ, Սուլասը և այլք ընդդեմ Ֆրանսիայի (Soulas et Autres c. France) գործով 2008 թվականի հուլիսի 10-ի վճիռը, դիմում no. 15948/03, §§ 43-44, Գունդուզն թուրքիայի (Gunduz v. Turkey) գործով 2003 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռը, դիմում no. 35071/97, § 49

²⁶ Տագիևը և Հուսեյնովն ընդդեմ Ադրբեջանի (Tagiyev and Huseynov v. Azerbaijan) գործով 2019 թվականի դեկտեմբերի 5-ի վճիռը, դիմում no. 13274/08, §§ 46-48

նստիկաններին կվառեին: Մարդիկ կվառեին նրանց: Դա կլիներ հասարակությունը այս նստիկանական կեղտից մաքրելու առաջին քայլը»:

Գործի հանգամանքները դիտարկելով՝ Եվրոպական դատարանը ճանաչել է դիմողի կարծիքի արտահայտման ազատության իրավունքի խախտումը՝ կարևոր համարելով հետևյալ հանգամանքները՝

1. խոսքի ոճը. ընդունելով, որ դիմողի խոսքում կիրառվել են վուլգար, վիրավորական արտահայտություններ և արտահայտվել է [հանրությանը] անհավատարիմ նստիկաններին վերացնելու ցանկություն՝ Եվրոպական դատարանը միաժամանակ նշել է, որ վուլգար արտահայտությունների օգտագործումն ինքնին չի կարող որոշիչ լինել վիրավորական խոսքի գնահատման հարցում, քանի որ նման արտահայտությունները կարող են կիրառվել ոճական պատճառներով: Անդրադառնալով «Առաջվիցի նման նստիկաններին վառելու» մասին դիմողի խոսքին՝ Եվրոպական դատարանը չի համաձայնել, որ այն կարող է դիտարկվել որպես նստիկանների ոչնչացման կոչ, և գնահատել է այն որպես փոխաբերական իմաստով կիրառված *սադրիչ խոսք*, որն արտահայտում է դիմողի ցանկությունը տեսնելու կոռուլմպացված և բռնարար նստիկաններից գերծ նստիկանություն:

2. խոսքի՝ հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցի առնչվելն ու քաղաքական քննադատություն հաղիսանալը. վճռով նշվել է, որ դիմողի մեկնաբանությունը կատարվել է նստիկանության կողմից տարածքային *խորհրդարանական ընտրությունների ժամանակ* կատարված խուզարկության մասին հայտարարության կոնտեքստում: Հայտարարության մեկնաբանություններում ծավալվել է նստիկանության կողմից ընդդիմադիր գործիչներին լռեցնելու և ճնշելու վերաբերյալ քննարկում, որը *հանրային հետաքրքրություն ներկայացնող հարց է*: Դիմողը ներգրավվել է այդ քննարկման մեջ՝ արտահայտելով նստիկանության գործելակերպի *Էմոցիոնալ ժխտում և անհամաձայնություն*: Այս համատեքստում դիմողի խոսքը դիտարկելու պարագայում այն կընկալվի որպես ռուսական նստիկանությունում առկա վիճակի կտրուկ քննադատություն:

3. թիրախավորված անձինք կամ խումբը և այն, թե որքանով են նրանք խոցելի տվյալ հասարակությունում. Եվրոպական դատարանն արձանագրել է, որ դիմողի խոսքն անձնապես չի թիրախավորել որևէ նստիկանի, այլ առնչվել է նստիկանությանը՝ որպես ամբողջություն՝ վերահաստատելով, որ քաղաքացիական ծառայողներն ի պաշտոնե գործելիս ենթակա են ավելի լայն քննադատության, քան հասարակ քաղաքացիները: Բացի այդ, նստիկանությունը, որպես իրավապահ մարմին, *չի կարող դիտարկվել որպես չպաշտպանված փոքրամասնություն կամ ճշնումների և անհավասարության պատմություն ունեցող խումբ*, կամ նախապաշարմունքների, թշնամանքի և խտրականության ենթարկվող խումբ կամ որևէ այլ պատճառով խոցելի խումբ, ինչից ելնելով՝ կարող էր կարիք ունենալ վիրավորանքների, ծաղրի կամ գրպարտության միջոցով կատարվող հարձակումներից առավել բարձր մակարդակի պաշտպանության:

4. սոցիալական կոնտեքստը, հավանականությունը, որ խոսքը կհանգեցնի թիրախավորված խմբի նկատմամբ բռնության կամ ատելության. վճռով նշվել է, որ տվյալ պարագայում առկա չի եղել այնպիսի զգայուն սոցիալական կամ քաղաքական իրավիճակ կամ ընդհանուր անվտանգային լարված իրավիճակ, ինչի համատեքստում հնարավոր կլիներ եզրակացնել, որ դիմողի արտահայտությունները կարող են հանգեցնել նստիկանության ծառայողների նկատմամբ ապօրինի գործողությունների: Ներպետական դատարանները, ուստի, իրենց դատական ակտերով չեն

պարզաբանել, թե ինչ հանգամանքներից ելնելով է տվյալ խումբը (ոստիկանները) կարիք ունեցել առավել բարձր մակարդակի պաշտպանության:

5. խոսքի տարածվածության ծավալը, ներառյալ՝ խոսքի հեղինակի անձը և կարգավիճակը հասարակությունում. Եվրոպական դատարանը դիտարկել է այն հանգամանքը, որ մեկնաբանությունը կատարվել է հանրությանը հասանելի համացանցային հարթակում, սակայն արձանագրել է, որ մեկնաբանության կատարման պահին դիմողը հանրաճանաչ օգտատեր կամ բլոգեր չի եղել, մեկնաբանությունը չի գրավել մեծ հանրային ուշադրություն և հեռացվել է դիմողի կողմից այն կատարելուց հետո մեկ ամիս անց, ուստի մեկնաբանության մասշտաբը բավականին սահմանափակ է եղել:

6. ներպետական դատարանների փաստարկները. Եվրոպական դատարանը նկատել է, որ ներպետական դատարանները գլխավորապես ուշադրություն են դարձրել դիմողի կողմից կիրառված բառերին և ձևակերպումներին՝ սահմանափակվելով խոսքի ձևով և տոնայնությամբ, սակայն չեն գնահատել մեկնաբանությունը տվյալ հրապարակման ներքո կատարված ընդհանուր քննարկումների համատեքստում, չեն գնահատել հավանականությունը, թե արդյոք տվյալ մեկնաբանությունը կհանգեցնի վնասակար հետևանքների, սոցիալական և քաղաքական կոնտեքստը, մեկնաբանության հասանելիությունն ու մասշտաբը:

Հարկ է նաև նկատել, որ ըստ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի՝ հասարակության որոշ խմբերի խոսքը, պայմանավորված ժողովրդավարական հասարակությունում նրանց գործունեության նշանակությամբ, ենթադրում է առավել բարձր պաշտպանության մակարդակ: Խոսքը, մասնավորապես, լրագրողների, ինչպես նաև քաղաքական գործիչների մասին է:

Այսպես, Եվրոպական դատարանի կայուն նախադեպային իրավունքով հաստատվել է, որ մամուլը կարևորագույն դեր է խաղում ժողովրդավարության պատշաճ գործունեության ապահովման հարցում՝ հանդես գալով որպես ժողովրդավարության հանրային պահակ (public watchdog):

Այս համատեքստում անդրադառնալով լրատվամիջոցների կողմից ենթադրյալ ատելության խոսքի տարածմանը՝ Եվրոպական դատարանն ընդձեռնել է, որ մամուլի ազատությունը հատկապես կարևոր է, և նշել, որ թեև լրատվամիջոցները ևս չպետք է հատեն այլոց հեղինակության և իրավունքների կամ ազգային անվտագության և տարածքային ամբողջականության պաշտպանության իրավաչափ նպատակների շեմը, այնուամենայնիվ նրանք կրում են հանրային հետաքրքրություն ներկայացնող տեղեկությունների և գաղափարների, ներառյալ՝ քաղաքական հարցերին վերաբերող (անգամ այնպիսի հարցերին, որոնք տարածայնություններ են առաջացնում), տարածման պարտականություն: Ընդ որում, այս պարտականությունից բխում է նաև լրատվամիջոցների իրավունքը՝ ստանալու նման տեղեկատվություն: Հակառակ դեպքում մեղիան չեր կարողանա կատարել իր հանրային պահակի (public watchdog) դերը: Ընդ որում, Եվրոպական դատարանն ընդգծել է, որ այս սկզբունքները հավասարապես վերաբերելի են ինչպես տպագիր մամուլին, այնպես էլ տեսալսողական մեդիային²⁷:

²⁷ Տե՛ս, օրինակ, Ջերսիլդն ընդդեմ Դանիայի (ՄՊ) (Jelsild v. Denmark) գործով 1994 թվականի սեպտեմբերի 23-ի վճիռ, դիմում no. 15890/89, § 31, Օզգուր Գունդեմն ընդդեմ Թուրքիայի (Ozgur Gundem v. Turkey) գործով 2000 թվականի մարտի 16-ի վճիռը, դիմում no. 23144/93, § 58, Մեդիա ՖՄ Ռեհա Ռադիո վե Իլետիսիմ Հիլմետլերի Ա.Ս.-ն ընդդեմ Թուրքիայի (Medya FM Reha Radyo Ve İletişim Hizmetleri A.Ş. v. Turkey) գործով 2006 թվականի նոյեմբերի 14-ի վճիռը, դիմում no. 32842/02

Լրատվական ազատության շրջանակներում ենթադրյալ ատելության խոսքի դեմ կիրառված պատասխանատվության միջոցների իրավաչափությանն անդրադառնալիս Եվրոպական դատարանը հիմնվում է նույն չափանիշների վրա, ինչպես և այլ գործերի դեպքում՝ միաժամանակ, առանձնահատուկ նշանակություն ընձեռելով հետևյալ հանգամանքներին.

1. Արդյոք պատասխանատվության ենթարկված լրագրողն ինքն է խոսքի հեղինակը եղել, թե վերջինս միայն նպաստել է ենթադրյալ ատելության խոսքի տարածմանն իր լրատվական գործունեության ընթացքում: Եվրոպական դատարանը հատկապես ընդգծել է հարցազրույցների միջոցով կատարվող լրատվության կարևորությունը՝ շեշտելով, որ հարցազրույցում մեկ այլ անձի կողմից կատարված հայտարարությունները տարածելուն օժանդակելու համար լրագրողին պատասխանատվության ենթարկելը լրջորեն կխոչընդոտի լրատվամիջոցների կողմից հանրային շահին առնչվող հարցերի շուրջ քննարկմանը նպաստելուն և պետք է բացառվի, եթե առկա չեն նման պատասխանատվության ենթարկելու հատկապես հիմնավոր պատճառներ: Ընդ որում, Ջերսիլդն ընդդեմ Դանիայի գործով Եվրոպական դատարանը նշել է, որ անգամ այն հանգամանքը, որ որպես պատիժ կիրառվել է տուգանքը, Եական չէ. առանցքային է այն, որ լրագրողը դատապարտվել է:

2. Խոսքի տարածման միջոցի հնարավոր ազդեցությունը լսարանի վրա: Եվրոպական դատարանն ընդգծել է, որ լայնորեն տարածված փաստ է, որ տեսալսողական մեդիան հաճախ ավելի անմիջական և ուժեղ ազդեցություն ունի, քան տպագիր մեդիան՝ նկատի ունենալով նաև, որ տեսալսողական մեդիան հնարավորություն ունի պատկերների միջոցով որոշակի գաղափարներ փոխանցելու՝ ի տարբերություն տպագիր մեդիայի,

3. Այն նպատակը, որը լրատվամիջոցը հետապնդում է կոնկրետ նյութի տարածմամբ, ընդ որում, այս առումով կարևորվում է, թե արդյոք լրագրողի կամ լրատվամիջոցի տարածած նյութը (լինի դա հոդված, ռեպորտաժ, թե հաղորդում), իր ամբողջության մեջ և օբյեկտիվ տեսանկյունից դիտարկելիս այնպիսի տպավորություն է թողնում, որ այն նպատակ է ունեցել քարոզելու կամ խթանելու ռասիստական հայացքներ և գաղափարներ: Նման եզրահանգման գալու համար Եվրոպական դատարանը համադրում է հրապարակման կամ հաղորդման բովանդակությունը և այն, թե ինչպես է այդ բովանդակությունը մատուցվում. օրինակ, արդյոք ատելության խոսք պարունակող արտահայտությունները տարածվել են առանց դրանց լրացուցիչ ենթատեքստ հաղորդելու, արդյոք նյութի հեղինակը ցույց է տվել իր վերաբերմունքը (դրական, թե բացասական) տվյալ արտահայտությունների նկատմամբ, կամ տրամադրել է լրացուցիչ տեղեկություն, որը նյութի լսարանի մոտ որոշակի վերաբերմունք կարող է առաջացնել խոսքի առաջնային հեղինակի նկատմամբ²⁸: Գունդուզն ընդդեմ Թուրքիայի գործով Եվրոպական դատարանը կարևորել է, որ հեռուստահաղորդումը մշակված է եղել այնպիսի ձևաչափով, որ խրախուսվի տեսակետների փոխանակումը կամ նույնիսկ բանավեճը՝ այնպես, որ ինչպես կարծիքները հակազդեն և հավասարակշռեն միմյանց և բանավեճը գրավի ու պահի հանդիսատեսի ուշադրությունը:²⁹

Ջերսիլդն ընդդեմ Դանիայի գործով Եվրոպական դատարանը, անդրադառնալով հնարավոր ատելության խոսքի գնահատման ընթացքում լրագրողի ընտրած

²⁸ Ջերսիլդն ընդդեմ Դանիայի (ՄԴ) (Jelsild v. Denmark) գործով 1994 թվականի սեպտեմբերի 23-ի վճիռ, դիմում no. 15890/89, §§ 31, 33, 35

²⁹ Գունդուզն ընդդեմ Թուրքիայի (Gunduz v. Turkey) գործով 2003 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռը, դիմում no. 35071/97, § 44

մեթոդներին, նշել է, որ ներպետական դատարանները չպետք է պարտադրեն իրենց հայացքները լրատվամիջոցներին՝ նշելով, թե վերջիններս իրադարձությունների լուսաբանման ինչ տեխնիկա կամ միջոցներ պետք է ընտրեին: Այս առնչությամբ Եվրոպական դատարանը կրկին ընդգծել է, որ Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածով պաշտպանվում են ոչ միայն արտահայտված գաղափարների կամ տեղեկության բովանդակությունը, այլ նաև այն ձևը կամ ոճը, որով դրանք ներկայացվել են:

Նշված գործով Դատարանը Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում է ճանաչել՝ անգամ նշելով, որ այն արտահայտությունները, որոնք ասվել էին հարցված անձանց կողմից, անվիճելիորեն ավելի քան վիրավորական էին թիրախավորված խմբերի համար և Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածով չէին պաշտպանվում: Եվրոպական դատարանը նաև համաձայնել է ներպետական դատարանների այն պնդումների հետ, որ Նյուլթի պատրաստումը լրագրողի նախաձեռնությունն էր և որ վերջինս նախապես գիտեր, որ հարցազրույցի ընթացքում կհնչեն ռասիստական արտահայտություններ, ինչպես նաև մոնտաժը կատարել էր այնպես, որ վերջնական Նյուլթում պահպանվել են ռասիստական պնդումները, և առանց լրագրողի մասնակցության այդ արտահայտությունները հասանելի չէին դառնա անձանց լայն շրջանակին: Այնուամենայնիվ, անգամ այս դեպքում Եվրոպական դատարանը չի համարել, որ Նյուլթն ամբողջական դիտարկելու պարագայում լրագրողի դատապարտումը կարող է արդարացված համարվել:

Նման որոշման կայացման համար առաջնային է եղել այն հանգամանքը, որ հեռարձակված Նյուլթից ակնհայտ է եղել, որ լրագրողը ռասիստական նպատակներ չի հետապնդել. վերջինս Նյուլթը սկսել է՝ հղում կատարելով Դանիայում տվյալ ժամանակաշրջանում ռասիզմի վերաբերյալ հանրային քննարկումներին ու լրատվամիջոցների մեկնաբանություններին՝ այդպիսով ուղղորդելով հանդիսատեսին, որպեսզի հաղորդումը դիտվի հենց այդ կոնտեքստում: Լրագրողն այնուհետև հայտարարել է, որ ծրագրի նպատակը ինդրի տարբեր ասպեկտները հասցեագրելն է՝ նույնականացնելով ռասիստ անհատների և ներկայացնելով նրանց մտածելակերպն ու սոցիալական ծագումը: Եվրոպական դատարանը շեշտել է, որ չնայած նրան, որ հաղորդմամբ ուղղակիորեն չի մատնանշվում հարցազրույցների շրջանակներում հնչած ռասիստական գաղափարների և արտահայտությունների անբարո, վտանգավոր և ապօրինի լինելը, ընդհանուր առմամբ հաղորդումը ոչ միայն չէր կարող դիտարկվել որպես ռասիստական գաղափարները տարածելու նպատակ հետապնդող, այլև ճիշտ հակառակը՝ այն ձգտել է բացահայտել, վերլուծել և բացատրել նման հայացքներ ունեցող երիտասարդների տվյալ խմբին: Դատարանը շեշտել է, որ հարցազրույցի ընթացքում դիմողն իր վարքագծով հստակ տարանջատել է իրեն հարցվող անձանցից, ինչպես օրինակ՝ նրանց ներկայացնելով որպես «ծայրահեղական երիտասարդների խումբ», որոնք աջակցում են Կու-Կլուքս-Կլանին կամ խոսելով նրանց հանցավոր գործունեության մասին նրանցից ոմանց հետ: Լրագրողը նաև հերքել է հարցազրույցների ընթացքում հնչած որոշ ռասիստական գաղափարներ, և հաղորդումն ընդհանուր առմամբ փոխանցել է այն գաղափարը, որ ռասիստական մտածելակերպը այդ երիտասարդների ընդհանուր հակասոցիալական դիրքորոշման մի մասն է:

Եվրոպական դատարանը կարևորել է նաև, որ հաղորդումը հեռարձակվել է որպես դանիական լրատվական ծրագրի մի մաս և ուղղված է եղել բարձր տեղեկացվածության մակարդակ ունեցող լսարանի:³⁰

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ անգամ հաղորդման ընթացքում հնչած ռասիստական (կամ քսենոֆոբ) գաղափարներն ուղղակիորեն չհերքելու և դրանց անթույլատրելիությունը չմատնանշելու պարագայում հաղորդումը կարող է համահունչ լինել Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի պահանջներին, եթե այն մշակված է այնպես, որ հաղորդման ընթացքում այդ գաղափարները չեն ներկայացվում որպես ճշմարտացի, դրանց նկատմամբ դրական կամ լիովին չեզոք վերաբերմունք չի դրսևորվում և հաղորդումն իր ամբողջության մեջ դիտարկելիս չի ստեղծում այնպիսի տպավորություն, որ այն քարոզում է կամ կարող է քարոզել ռասայական ատելություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք:

Ինչ վերաբերում է քաղաքական գործիչներին, ապա Եվրոպական դատարանը արձանագրել է, որ կարծիքի արտահայտման ազատությունը կարևոր է բոլորի համար, հատկապես ընտրված ներկայացուցչի՝ նկատի ունենալով, որ վերջինս ներկայացնում է իր ընտրողներին, բարձրաձայնում նրանց մտահոգությունները և պաշտպանում նրանց շահերը: Ուստի, ընդդիմադիր պատգամավորի խոսքի ազատությանը միջամտությունը ենթադրում է Եվրոպական դատարանի կողմից հատկապես խիստ վերահսկողություն:³¹

Միաժամանակ, Եվրոպական դատարանն արձանագրել է, որ քաղաքական գործիչները պետք է իրենց հանրային ելույթներում խուսափեն այնպիսի հայտարարություններից, որոնք հավանական է, որ կծնեն անհանդուրժողականություն:

Ֆերետն ընդդեմ Բելգիայի գործով, օրինակ, արձանագրելով, որ նախընտրական քարոզարշավի ընթացքում դիմողի կողմից պատրաստված և վերջինիս կուսակցության կողմից տարածված թռուցիկները պարունակել են ազգային, ռասայական և կրոնական հիմքով ատելություն և անհանդուրժողականություն հրահրող (ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի կերպով) ուղերձներ, Եվրոպական դատարանը փաստել է, որ այն, որ դիմողը պատգամավոր է, չի կարող պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք հանդիսանալ: Ըստ Եվրոպական դատարանի՝ քաղաքական գործիչները հատկապես պետք է ուշադիր լինեն ժողովրդավարության և դրա սկզբունքների պաշտպանության առնչությամբ:

Ընդ որում, Եվրոպական դատարանը կարևորել է այն միջոցը, որն օգտագործվել է ռասիստական գաղափարները տարածելու համար, կոնտեսքտը, որի պայմաններում դրանք տարածվել են և հնարավոր ազդեցությունը, որն այդ գաղափարների տարածումը կարող էր ունենալ հասարակական կարգի և սոցիալական խմբի համախմբվածության վրա: Ինչպես արդեն նշվեց, դիմողը և նրա կուսակցությունը պատրաստել և տարածել էին ատելություն և անհանդուրժողականություն հրահրող թռուցիկներ նախընտրական քարոզարշավի շրջանակներում, ինչը ենթադրում է, որ վերջիններս նպատակ ունեին իրենց գաղափարները հասանելի դարձնելու ամբողջ հնարավոր ընտրագանգվածին: Եվրոպական դատարանը գտել է, որ թեև ընտրական կոնտեսքտում կուսակցություններն օգտվում են արտահայտման ազատության հնարավորինս լայն շրջանակից, սակայն ռասիստական կամ քսենոֆոբ խոսքի պարագայում

³⁰ Չերսիլդն ընդդեմ Դանիայի (ՄՊ) (Jelsild v. Denmark) գործով 1994 թվականի սեպտեմբերի 23-ի վճիռ, դիմում no. 15890/89, §§ 31-35, 36

³¹ Ֆերետն ընդդեմ Բելգիայի (Ferret c. Belgique) գործով 2009 թվականի հուլիսի 16-ի վճիռ, դիմում no. 15615/07, §65

Նախընտրական քարոզարշավի ժամանակաշրջանը նպաստում է այդ խոսքի ավելի մեծ ազդեցություն և վնաս ունենալուն: Ասվածը պայմանավորված է նրանով, որ նախընտրական քարոզարշավի ընթացքում թեկնածուները սովորաբար ավելի կայուն տեսակետներ են արտահայտում և կարգախոսներն ու կարծրատիպային ուղերձերը սկսում են գերակայել հիմնավոր փաստարկման նկատմամբ:³² (Կարևոր է, որ նշված գործի շրջանակներում Եվրոպական դատարանը արված արտահայտությունները գնահատել է Բելգիայում տվյալ պահին առկա սոցիալական կոնտեքստի լույսի ներքո, երբ հատկապես տարածված էր միգրանտների նկատմամբ անհանդուրժողական վերաբերմունքը և ատելության խոսքի տարածումը, այդ թվում և հատկապես՝ քաղաքական գործիչների կողմից):

³² Ֆերետն ընդդեմ Բելգիայի (Ferret c. Belgique) գործով 2009 թվականի հուլիսի 16-ի վճիռ, դիմում no. 15615/07, §65, 76

ԳԼՈՒԽ 2. ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՆ

§ 2.1. Ներպետական օրենսդրության վերլուծությունը

Ատելության խոսքի և բռնության հրահրման որոշակի դրսևորումների համար պատասխանատվություն էր սահմանվում ինչպես 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգրքով (այսուհետ՝ նախկին օրենսգիրք), այնպես էլ 2021 թվականի մայիսի 5-ի քրեական օրենսգրքով (այսուհետ՝ նոր օրենսգիրք):

Այսպես, նախկին օրենսգրքի 226-րդ հոդվածով պատասխանատվություն էր սահմանվում ազգային, ռասայական կամ կրոնական թշնամանք հարուցելու համար: Նշված հանցակազմի օբյեկտիվ կողմը դրսևորվում էր այնպիսի գործողությունների կատարմամբ, որոնք ուղղված էին՝

- 1) ազգային, ռասայական կամ կրոնական թշնամանք հարուցելուն կամ
- 2) ռասայական գերազանցությանը կամ
- 3) ազգային արժանապատվությունը նվաստացնելուն:

Նման ընդհանրական ձևակերպումների կիրառմամբ պայմանավորված՝ քննարկվող հանցակազմը կարող էր ներառել արարքների բավականին լայն շրջանակ: Միաժամանակ, նման շրջանակն էականորեն սահմանափակվում էր հոդվածով նախատեսված պաշտպանվող հատկանիշներով, որոնք երեքն էին՝ ազգային, ռասայական և կրոնական պատկանելություն:

Արարքի սուբյեկտիվ կողմը դրսևորվում է ուղղակի դիտավորությամբ, այլ խոսքերով, հանցավորը պետք է գիտակցի, որ իր գործողություններն ուղղված են ազգային, ռասայական կամ կրոնական թշնամանք հարուցելուն կամ ռասայական գերազանցությանը կամ ազգային արժանապատվությունը նվաստացնելուն, և ցանկանա դա:

Բռնություն գործադրելու հրապարակային կոչերը, բռնությունը հրապարակայնորեն արդարացնելը կամ քարոզելը քրեականացվել են միայն 2020 թվականի ապրիլի 15-ի թիվ ԶՕ-231-Ն օրենքով, որով նախկին օրենսգիրքը լրացվել է 226.2 հոդվածով: Հոդվածի 1-ին մասով պատասխանատվություն է նախատեսվում անձի կամ անձանց խմբի նկատմամբ սեռով, ռասայով, մաշկի գույնով, էթնիկական կամ սոցիալական ծագումով, գենետիկական հատկանիշներով, լեզվով, կրոնով, աշխարհայացքով, քաղաքական կամ այլ հայացքներով, ազգային փոքրամասնությանը պատկանելությամբ, գույքային վիճակով, ծնունդով, հաշմանդամությամբ, տարիքով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված բռնություն գործադրելու հրապարակային կոչերի, նման բռնությունը հրապարակայնորեն արդարացնելու կամ քարոզելու համար:

Նշված հոդվածով սահմանվող պաշտպանվող հատկանիշների շրջանակը կրկնում է ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածի դրույթները և էականորեն ավելի լայն է՝ ի համեմատություն նախկին օրենսգրքի 226-րդ հոդվածի: Բացի այդ, 226.2 հոդվածով նախատեսվել է պաշտպանվող հատկանիշների ոչ սպառնիչ ցանկ. այս հանցակազմն առկա կլինի, եթե արարքը կատարվել է ցանկացած «անձնական կամ սոցիալական բնույթի» հատկանիշի հիմքով, թեև օրենսգիրքը չի սահմանում այն հնարավոր չափանիշները, որոնք թույլ կտան որոշելու, որ կոնկրետ հանգամանքը հանդիսանում է «անձնական կամ սոցիալական բնույթի»՝ թողնելով դա դատական մեկնաբանությանը:

Այս արարքը ևս դրսևորվում է ուղղակի դիտավորությամբ՝ հանցավորը պետք է գիտակցի, որ իր հրապարակային խոսքը պարունակում է բռնության կոչ կամ քարոզում կամ արդարացնում է բռնությունը՝ սահմանված պաշտպանվող հատկանիշներից որևէ մեկի հիմքով, և ցանկանա դա:

Նոր օրենսգրքով ատելության խոսքի և բռնության կոչերի համար պատասխանատվություն է նախատեսվում 329-րդ և 330-րդ հոդվածներով:

Այսպես, 329-րդ հոդվածով պատասխանատվություն է սահմանվում ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք հրահրելուն կամ քարոզելուն ուղղված հրապարակային խոսքի, ինչպես նաև այդ նպատակով նյութեր կամ առարկաներ տարածելու համար:

Սույն հանցանքը, թեև որոշակիորեն հատվում է նախկին օրենսգրքի 226-րդ հոդվածով նախատեսված արարքի հետ, սակայն նաև էականորեն տարբերվում է դրանից: Հանցակազմի օբյեկտիվ կողմը երկընտրային է և կարող է դրսևորվել հրապարակային խոսքով կամ նյութ կամ առարկա տարածելով:

Հանցակազմի սուբյեկտիվ կողմը դրսևորվում է ուղղակի դիտավորությամբ. հանցավորը պետք է գիտակցի իր արարքի հանցավոր բնույթը և այդ արարքի կատարումը պետք է նրա նպատակը կամ նպատակին հասնելու միջոցը լինի: Ընդ որում, էական է հանցավորի նպատակի առկայությունը՝ անձի կամ անձանց խմբի նկատմամբ ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք հրահրելը կամ քարոզելը:

Ինչպես կարելի է նկատել, պաշտպանվող հատկանիշների ցանկն ավելի լայն է, քան նախկին օրենսգրքի 226-րդ հոդվածով նախատեսվածը, և ոչ սպառնիչ է, այսինքն՝ չի սահմանափակվում ուղղակիորեն թվարկված հատկանիշներով:

Համապատասխանաբար, նոր օրենսգրքի 330-րդ հոդվածով պատասխանատվություն է նախատեսվում բռնություն գործադրելու հրապարակային կոչերի, բռնությունը հրապարակայնորեն արդարացնելու կամ քարոզելու, ինչպես նաև այդ նպատակով նյութեր կամ առարկաներ տարածելու համար: Այս հանցակազմը գրեթե նույնությամբ կրկնում է նախկին օրենսգրքի 226.2 հոդվածով նախատեսված արարքը՝ այն տարբերությամբ, որ լրացվել է օբյեկտիվ կողմի նոր դրսևորում՝ բռնությունը արդարացնելու կամ քարոզելու նպատակով նյութ կամ առարկա տարածելը:

Թեև ուղղակիորեն մատնանշվող պաշտպանվող հատկանիշների շրջանակը նեղացվել է (նախատեսված են միայն ռասայական, ազգային պատկանելությունը, էթնիկ կամ սոցիալական ծագումը, կրոնը, քաղաքական կամ այլ հայացքները կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքները), սակայն այս դեպքում ևս նախատեսվել է հատկանիշների ոչ սպառնիչ ցանկ, ինչը կարող է թույլ տալ ապահովել հոդվածի առավել լայն կիրառելիությունը:

Այս դեպքում ևս արարքի սուբյեկտիվ կողմը դրսևորվում է ուղղակի դիտավորությամբ՝ հանցավորը պետք է գիտակցի, որ իր խոսքը պարունակում է բռնության կոչ, կամ որ իր խոսքով կամ տարածած նյութով կամ առարկայով նա քարոզում կամ արդարացնում է բռնությունը, և այդ արարքի կատարումը նրա նպատակը կամ նպատակին հասնելու միջոցը լինի:

Սույն ուսումնասիրության 1-ին գլխով ներկայացված միջազգային ստանդարտների համատեքստում անդրադառնալով վերոնշյալ հոդվածներով նախատեսված արարքների քննության առանձնահատկություններին՝ հարկ է

Նկատել, որ առանցքային է յուրաքանչյուր դեպքի դիտարկումը հետևյալ հանգամանքների կամ դրանց մի մասի համատեքստում՝

1. խոսքի բովանդակությունը և ձևը, ներառյալ կիրառված ոճի առանձնահատկությունները,

2. այն սոցիալական իրադրությունը, որի պայմաններում խոսքն արվել է, և դրա հնարավոր ազդեցությունը խոսքի ընկալման վրա (արդյոք երկրում տվյալ պահին առկա է եղել լարված սոցիալական կամ քաղաքական մթնոլորտ, որն ավելի ազդեցիկ է դարձնում խոսքը և խորացնում դրա հնարավոր բացասական հետևանքները),

3. դիտավորության առկայությունը. վերոնշյալ 4 արարքների պարագայում էլ հանցակազմի սուբյեկտիվ կողմը դրսևորվում է ուղղակի դիտավորությամբ, ուստի առաջնային է, որպեսզի դեպքի փաստական հանգամանքների գնահատականը և դրա վրա հիմնված իրավական վերլուծությունը անդրադառնան այն հանգամանքներին, որոնցից ելնելով՝ վարույթն իրականացնող մարմինը գտել է, որ արարքը կատարվել է ուղղակի դիտավորությամբ,

4. խոսքի հեղինակը, արդյոք վերջինս լրագրող է կամ քաղաքական գործիչ, և ինչպիսի ազդեցություն ունի վերջինս հասարակությունում կամ տվյալ խոսքի լսարանի շրջանում,

5. խոսքի տարածվածությունը՝ որքանով լայն լսարանի է այն հասանելի դարձել,

6. այն, թե ում է ուղղված խոսքը, արդյոք թիրախավորված անձը կամ խումբը հայաստանյան հասարակությունում առավել խոցելի են, թե հակառակը՝ պատկանում են այնպիսի խմբի, որն առավել հանդուրժող պետք է լինի քննադատության նկատմամբ՝ կառավարությունը, պաշտոնատար անձինք, քաղաքական գործիչները,

7. արդյոք խոսքն առնչվում է հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցի կամ քաղաքական երկխոսության մաս է կազմում:

Նկատի ունենալով, որ քննարկվող բոլոր հանցակազմերը ձևական են, այսինքն՝ արարքը կատարված է համարվում՝ անկախ հնարավոր հանցավոր հետևանքների վրա հասնելու հանգամանքից, կարծում ենք, որ վարույթն իրականացնող մարմինը կարող է առանձին չդիտարկել այն, թե որքանով է հավանական, որ կոնկրետ խոսքը կարող էր հանգեցնել բռնության կամ ատելություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք առաջացնել: Միաժամանակ, որոշակի հետևանքների վրա հասնելու հավանականության դիտարկումը հնարավորություն կտա գնահատել նաև կոնկրետ խոսքի ծանրությունը:

Նման գնահատման իրականացումը բխում է կարծիքի արտահայտման ազատության կոնվենցիոն և սահմանադրական իրավունքի ապահովման և պաշտպանության պահանջից:

Այսպես, Սահմանադրության 3-րդ հոդվածով ոչ միայն ամրագրվում են հանրային իշխանության պարտականությունները՝ հարգելու և պաշտպանելու մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները, այլ նաև սահմանվում է, որ *հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:*

Սահմանադրության 42-րդ հոդվածով ամրագրվում է կարծիքի ազատ արտահայտման իրավունքը, ինչպես նաև սահմանվում է, որ կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Այսպիսով, կարծիքի արտահայտման ազատության յուրաքանչյուր սահմանափակում պետք է կատարվի Սահմանադրությամբ նախատեսված իրավաչափ նպատակով, իսկ կիրառված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն նպատակին հասնելու համար և համարժեք լինեն սահմանափակվող իրավունքի նշանակությանը:

Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք արձանագրել, որ կրելով մարդու իրավունքներն ու ազատությունները հարգելու և պաշտպանելու պարտականությունը՝ քրեական վարույթն իրականացնող մարմինները նախկին օրենսգրքի 226-րդ և 226.2 և նոր օրենսգրքի 329-330-րդ հոդվածներով նախատեսված արարքների քննության ընթացքում սահմանափակված են կարծիքի արտահայտման ազատության իրավունքի պաշտպանության հրամայականով և դրանից բխող անհրաժեշտ ստանդարտներով:

Ուստի, յուրաքանչյուր դեպքում անգամ քննարկվող հոդվածներով սահմանված հանցակազմերի հատկանիշների ձևական առկայության պարագայում հնարավոր է, որ վերոնշյալ չափանիշների հաշվառմամբ տվյալ խոսքի համապարփակ գնահատումը՝ կարծիքի արտահայտման ազատության՝ որպես անմիջականորեն գործող հիմնարար իրավունքի համատեքստում, թույլ տա հանգել եզրակացության, որ արարքը չի համապատասխանում այն ծանրության աստիճանին, որպեսզի հնարավոր լինի արձանագրել քրեական օրենսգրքով նախատեսված հանցակազմի առկայությունը՝ ելնելով այն հանգամանքից, որ քրեական պատասխանատվության միջոցների կիրառումը կհանգեցնի կարծիքի արտահայտման ազատության իրավունքի անհամաչափ սահմանափակմանը և հետևաբար՝ խախտմանը:

Այսպիսով, գտնում ենք, որ նախկին օրենսգրքի 226-րդ և 226.2 և նոր օրենսգրքի 329-330-րդ հոդվածներով սահմանված հանցակազմերի տարրեր հանդիսացող «բռնության կոչ», «բռնության քարոզում կամ արդարացում», «ատելություն, անհանդուրժողականություն, խտրականություն կամ թշնամանք քարոզել», և այլն, արարքների առկայությունը չի կարող հաստատված համարվել՝ առանց յուրաքանչյուր դեպքով խնդրո առարկա խոսքը Ռաբաթի գործողությունների ծրագրով նախատեսված կամ Եվրոպական դատարանի կողմից կիրառվող թեստի շրջանակներում դիտարկելու:

§ 2.2. Ներպետական պրակտիկայի ուսումնասիրության հիման վրա կատարված արձանագրումները

ՀՀ դատական դեպարտամենտի կողմից հրապարակված վիճակագրության համաձայն՝ նախկին օրենսգրքի 226-րդ հոդվածով 2022 թվականին առկա է 3 անավարտ քրեական վարույթ և կայացվել է 2 դատավճիռ, 2021 թվականի դրությամբ առկա է եղել 3 անավարտ դատական վարույթ և 1 վարույթով կայացվել է դատավճիռ, 2020 թվականի դրությամբ՝ 1 անավարտ վարույթ և 1 վարույթ, որով կայացվել է բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու մասին որոշում: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հարցմանն ի պատասխան՝ Բարձրագույն դատական խորհրդի գրությամբ տեղեկացվել է, որ 2021 թվականի ընթացքում նախկին օրենսգրքի 226.2 հոդվածի շրջանակներում քննվել է 2 քրեական գործ, 2022 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում՝ 1 քրեական գործ:

«Դատալեքս» տեղեկատվական համակարգի միջոցով ուսումնասիրվել են 2020-2023 թվականների ընթացքում 19 քրեական գործով³³ կայացված (ինչպես ուժի մեջ մտած, այնպես էլ դեռևս բողոքարկման փուլում գտնվող) դատական ակտերը: Կարևոր է արձանագրել, որ դատական ակտերի ուսումնասիրությունը և դրանց վերլուծության, ներառյալ՝ արձանագրված խնդիրների ներկայացումը նպատակ չի հետապնդում որևէ կերպ կասկածի տակ դնելու կամ վիճարկելու որևէ դատական ակտի իրավաչափությունը: Սույն ուսումնասիրության շրջանակներում միայն գնահատվում է, թե որքանով են դատարանները ենթադրյալ ատելության խոսքի դեպքերի քննության ընթացքում հաշվի առել և հիմնվել միջազգային ստանդարտներից բխող չափանիշների վրա: Ուսումնասիրության արդյունքները հանգում են հետևյալին.

Ուսումնասիրված 19 քրեական վարույթից 14-ով կայացվել է մեղադրական դատավճիռ, 4-ով՝ արդարացման, 1 վարույթի շրջանակներում ամբաստանյալն ազատվել է քրեական պատասխանատվությունից և վերջինիս նկատմամբ կիրառվել

³³ Ուսումնասիրվել են 2023 թվականի հուլիսի 31-ի դրությամբ «Դատալեքս» տեղեկատվական համակարգում հասանելի դատական ակտերը, որոնք կայացվել են հետևյալ քրեական գործերի շրջանակներում՝ թիվ ԱՎԴ4/0002/01/23, ԵԴ/1959/01/22, ԵԴ/0640/01/22, ԵԴ/1337/01/22, ԿԴ1/0027/01/20, ԵԴ/0493/01/19, ԼԴ/0021/01/23, ՍԴ/0079/01/22, ԵԴ/1603/01/21, ԵԴ/1485/01/21, ԵԴ/0383/01/21, ԵԴ/0348/01/21, ԵԴ/0323/01/21, ԵԴ/0612/01/21, ԱՐԱԴ/0060/01/21, ԳԴ1/0048/01/21, ԵԴ/1285/01/21, ԵԴ/1103/01/21, ՍԴ/0044/01/21:

են բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ: 17 քրեական գործով անձը մեղադրվել է նախկին օրենսգրքի 226.2 կամ նոր օրենսգրքի 330-րդ հոդվածով նախատեսված արարք կատարելու՝ բռնության կոչերի կամ բռնություն քարոզելու կամ արդարացնելու համար, ընդ որում՝ Նշված բոլոր դեպքերում մեղադրանք է առաջարկվել քաղաքական բնույթի խոսքի ընթացքում հնչեցված կամ կիրառված արտահայտությունների համար՝ «քաղաքական կամ այլ հայացքներով» կամ «անձի հանրային գործունեությամբ» պայմանավորված բռնություն հրահրելու համար: Ենթադրյալ բռնության կոչերը, բռնության քարոզումը կամ արդարացումն առավելապես ուղղված են եղել ՀՀ վարչապետի, խորհրդարանական մեծամասնությունը կազմող քաղաքական ուժի, որոշ դեպքերում՝ առանձին պատգամավորների, այլ պաշտոնատար անձանց նկատմամբ: Բացի այդ, 2 վարույթով խոսքն ուղղված է եղել ընդդիմադիր քաղաքական գործիչների դեմ, ևս մեկ վարույթով՝ ընդդիմադիր հայացքներ ունեցող քաղաքացիների դեմ: Նշված վարույթներից մեկով անձը մեղադրվել է ոչ միայն քաղաքական կամ այլ հայացքներով, այլ նաև ծնունդով պայմանավորված բռնություն գործադրելու հրապարակային կոչեր հնչեցնելու համար, մասնավորապես՝ խոսքը վերաբերել է Արցախի բնակիչներին:

Մնացած 2 քրեական վարույթով անձին մեղսագրվել է նախկին օրենսգրքի 226-րդ հոդվածով նախատեսված արարքը՝ մի դեպքում ազգային, իսկ մյուս դեպքում ազգային և կրոնական թշնամանք հարուցելը:

Մեղադրական դատավճիռներից երեքը կայացվել են համաձայնեցման վարույթի շրջանակներում, այսինքն՝ մեղադրյալը համաձայնել է իրեն մեղսագրվող արարքին և համաձայնության է եկել հանրային մեղադրողի հետ իր նկատմամբ նշանակման ենթակա պատժի, ներառյալ՝ այն կրելու նպատակահարմարության վերաբերյալ, ինչի վերաբերյալ կազմվել է արձանագրություն, որն ընդունվել է դատարանի կողմից³⁴: Մեկ քրեական գործով մեղադրական դատավճիռը կայացվել է արագացված կարգով դատական քննության շրջանակներում, այսինքն՝ ամբաստանյալը համաձայնել է իրեն առաջարկված մեղադրանքի հետ և միջնորդել արագացված դատական քննության կարգ կիրառելու մասին³⁵: Բոլոր երեք դեպքերում անձը դատապարտվել է քաղաքական հայացքներով պայմանավորված սոցիալական ցանցում բռնության հրապարակային կոչ պարունակող գրառում կատարելու համար:

Համաձայնեցման վարույթի շրջանակներում կայացված 3 դատավճիռներով էլ դատարաններն արձանագրել են, որ մեղադրյալին մեղսագրված արարքի կատարումն ապացուցված է, արարքը ճիշտ է որակված, համապատասխանում է նախկին օրենսգրքի 226.2 կամ նոր օրենսգրքի 330-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշներին:

Արագացված կարգով դատական քննությամբ կայացված դատավճռով ևս դատարանն արձանագրել է, որ ամբաստանյալը կատարել է հանցավոր արարք, որը նախատեսված է նախկին օրենսգրքի 226.2 հոդվածի 1-ին մասով, ամբաստանյալի կատարած հանցավոր արարքը հիմնավորված է, մեղսագրվող արարքի նկատմամբ քրեական օրենքի որակումը՝ ճիշտ:

Քննարկվող դեպքերում նման եզրահանգումը դատարանների կողմից կատարվել է առանց այս առնչությամբ իրավական վերլուծության ներկայացման, ինչը բխում է ինչպես 2021 թվականի հունիսի 30-ի, այնպես էլ 1998 թվականի հուլիսի 1-ի քրեական

³⁴ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի գլուխ 55

³⁵ 1998 թվականի հուլիսի 1-ի քրեական դատավարության օրենսգրքի՝ դատավճռի կայացման պահին (28.06.2021թ.) դրությամբ գործող գլուխ 45.1

դատավարության օրենսգրքերի կարգավորումներից (այսուհետ՝ համապատասխանաբար նոր ԸԴՕ և նախկին ԸԴՕ):

Այսպես, նոր ԸԴՕ 463-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մեղադրական դատավճիռը պարունակում է համաձայնության մասին արձանագրության տեքստի բառացի շարադրանքը: Միաժամանակ, նոր ԸԴՕ 461-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը չի ընդունում համաձայնության մասին արձանագրությունը և ընդհանուր կարգով շարունակում է նախնական դատախոսները, եթե կողմերի բանակցությունների ընթացքում ծանոթանալով քրեական գործին՝ հանգել է հետևության, որ մեղադրյալին մեղսագրված արարքին տրված իրավական գնահատականն ակնհայտորեն չի համապատասխանում մեղադրանքի փաստական հանգամանքներին:

Այսպիսով, համաձայնեցման վարույթի պարագայում դատարանը չի իրականացնում ապացույցների հետազոտում և միայն արձանագրում է մեղադրյալին մեղսագրված արարքին տրված իրավական գնահատականի և փաստական հանգամանքների միջև առկա **ակնհայտ** անհամապատասխանությունը, ինչը չի ենթադրում գործի հանգամանքների մանրամասն վերլուծություն և գնահատում:

Նմանապես, նախկին ԸԴՕ՝ դատավճիռի կայացման պահին (28.06.2021թ.) գործած 375.3 հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ դատարանն արագացված կարգով դատական քննությունն անցկացնելիս քրեական գործով ձեռք բերված ապացույցների ընդհանուր կարգով սահմանված հետազոտություն չի կատարում, սակայն ուսումնասիրում է ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները: Միաժամանակ, 375.1 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը արագացված կարգ կիրառելու միջնորդությունը մերժում է, եթե պարզում է, որ ամբաստանյալի արարքի իրավաբանական որակումը ճիշտ չէ:

Արագացված կարգով քննության պարագայում ևս, այսպիսով, հնարավոր չէ մանրամասն իրավական վերլուծության իրականացում՝ նկատի ունենալով, որ դատարանն ընդհանուր կարգով չի հետազոտում քրեական գործով ձեռք բերված ապացույցները, և միայն համոզվում է, որ ամբաստանյալի արարքի իրավաբանական որակումը ճիշտ է:

Ինչպես արդեն նշվեց, մեկ քրեական վարույթի շրջանակներում դատարանը կայացրել է բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին որոշում:

Որոշմամբ հաստատված է համարվել, որ անձը կատարել է իրեն մեղսագրվող արարքը, միաժամանակ, անդրադարձ չի կատարվել անձի հնչեցրած կամ հրապարակած խոսքին, այն չի վերլուծվել և չի գնահատվել սույն գլխի առաջին ենթագլխում շարադրված հանգամանքների կամ դրանց մի մասի համատեքստում:

Մնացած 14 քրեական վարույթով կայացված եզրափակիչ դատական ակտերի ուսումնասիրությունը թույլ է տալիս արձանագրել, որ 6 մեղադրական դատավճռով դատարաններն անդրադարձ չեն կատարել սույն ուսումնասիրությամբ ներկայացված՝ ատելության կամ բռնության հրահրման բազմակողմանի գնահատման համար անհրաժեշտ չափանիշներին:

Նշված գործերով դատավճիռների «դատարանի իրավական վերլուծությունները» բաժինը պարունակում է միայն ընդհանրական ձևակերպումներ, որոնցով պարզապես արձանագրվում է, որ դատարանը, վերլուծելով գործով ձեռք բերված ապացույցները՝ դրանք գնահատելով վերաբերելիության, թույլատրելիության, հավաստիության, իսկ բոլոր ապացույցների համակցությունը՝ հիմնավոր եզրափակիչ դատավարական ակտ կայացնելու կամ

գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, ղեկավարվելով օրենքով և ներքին համոզմամբ, հաստատված է համարել, որ մեղադրյալի մեղավորությունն ապացուցված է և արարքը ճիշտ է որակված:

Ինչպես արդեն նշվեց, 17 գործով անձանց մեղադրանք է առաջադրվել քաղաքական բնույթի խոսքի շրջանակներում հնչեցված ենթադրյալ բռնության կոչերի, քարոզի կամ բռնությունն արդարացնելու համար: Միաժամանակ, նշված գործերով կայացված դատավճիռներից 14-ով անդրադարձ չի կատարվել այն հանգամանքին, թե արդյոք մեղադրյալի խոսքն առնչվում է հանրային շահին վերաբերող հարցի կամ պարունակում է քաղաքական քննադատություն, և եթե այո, ապա արդյոք այդ հանգամանքով պայմանավորված՝ նման խոսքը ենթակա է ավելի բարձր մակարդակի պաշտպանության: Նմանապես, 9 մեղադրական դատավճռով չի քննարկվել արտահայտության կամ հրապարակման կատարման պահին հայաստանյան հասարակությունում առկա ընդհանուր սոցիալական իրադրությունը, խոսքը և դրա վտանգավորության աստիճանը չեն դիտարկվել այդ սոցիալական իրադրության համատեքստում այն դեպքում, երբ մեղադրանքի առարկա արտահայտությունները գլխավորապես արվել են արցախյան հակամարտության շուրջ ծավալված քննարկումների շրջանակներում կամ դրա վերաբերյալ կատարված հրապարակումներով: Մեկ գործով հրապարակման պահին առկա սոցիալական համատեքստին անդրադարձ չի կատարվել անգամ այն պարագայում, որ մեղադրյալը հայտնել է, որ իր խոսքը պայմանավորված է եղել երկրում տիրող իրավիճակի, ինչպես նաև կոնկրետ պաշտոնատար անձի քաղաքական գործունեության հետ:

Որոշ դեպքերում հանցավոր համարված արտահայտությունները չեն դիտարկվել նաև անձի ամբողջ խոսքի համատեքստում, և այն դեպքում, երբ անձն իր մեկնաբանությամբ արձագանքել է, օրինակ, որևէ լրատվամիջոցի հրապարակմանը կամ այլ իրադարձությանը, տվյալ մեկնաբանությունը չի համադրվել այդ հրապարակման կամ իրադարձության հետ և ըստ այդմ, չի գնահատվել դրանց ազդեցությունը անձի վրա, չի քննարկվել՝ արդյոք տվյալ իրադարձությունը կարող էր առաջացնել անձի այնպիսի էմոցիոնալ արձագանք, որի պարագայում կարող էր իրավաչափ լինել, օրինակ, վիրավորական կամ գռեհիկ արտահայտությունների կիրառումը խոսքում՝ որպես կարծիքի արտահայտման ազատության իրավունքով պաշտպանվող խոսքի ոճային դրսևորում: Անդրադարձ չի կատարվել նաև խոսքի բովանդակությանը, օգտագործված բառերին ու արտահայտություններին և դրանց հնարավոր նշանակությանը:

Որպես կանոն չի քննարկվել նաև անձի դիտավորության առկայությունը, արդյոք վերջինս ընկալել է իր խոսքը որպես բռնության հրահրում, թե նպատակ է ունեցել արտահայտելու իր դժգոհությունը, անձի հուզական վիճակը, նրա անձնային հատկանիշները և իր կողմից սովորաբար կիրառվող բառապաշարը (օրինակ, երբ ամբաստանյալը նշել է, որ ունի «փողոցային դաստիարակություն» և դրանով է պայմանավորված վիրավորական արտահայտությունների կիրառմամբ իր կարծիքն արտահայտելը) և այլն:

Մի շարք դեպքերում դատավճիռներով շեշտվել է այն հանգամանքը, որ կատարված հրապարակումը հասանելի է եղել հանրության լայն շերտերին (օրինակ՝ Ֆեյսբուք սոցիալական կայքում հրապարակված նյութերը հասանելի են եղել կայքի բոլոր օգտատերերին), սակայն անդրադարձ չի կատարվել այն հանգամանքին, թե նյութը գործնականում քանի անձի կողմից է դիտվել, քանի հոգի է դրան արձագանքել՝ այլ հավանելու, տարածելու կամ մեկնաբանություն թողնելու միջոցով: Բացի այդ, 1 գործով ապացույցների հետազոտման ընթացքում արձանագրվել է ենթադրյալ

հանցավոր արտահայտություններ պարունակող հրապարակումների նվազ տարածվածությունը, միաժամանակ, չի քննարկվել այն հանգամանքը, թե ինչպես է այդ նվազ տարածվածությունն անդրադառնում խոսքի ծանրության վրա:

3 վարույթով անձին մեղսագրվել է արարքի կատարումը տուժողի հանրային գործունեությամբ պայմանավորված: Միաժամանակ, մեղադրական դատավճիռ կայացնելով, նշված դեպքերում չի մեկնաբանվել և վերլուծվել, թե ինչ հանգամանքներից ելնելով է, որ «անձի հանրային գործունեությամբ պայմանավորված» նրա նկատմամբ բռնություն գործադրելու կոչ կատարելը կարող է որակվել որպես նախկին օրենսգրքի 226.2 կամ նոր օրենսգրքի 330-րդ հոդվածով նախատեսված արարք: Այսպես, նախկին օրենսգրքի 226.2 հոդվածով պատասխանատվություն է սահմանվում արարքը հետևյալ հիմքերով կատարելու համար՝ սեռ, ռասա, մաշկի գույն, էթնիկական կամ սոցիալական ծագում, գենետիկական հատկանիշներ, լեզու, կրոն, աշխարհայացք, քաղաքական կամ այլ հայացքներ, ազգային փոքրամասնությանը պատկանելություն, գույքային վիճակ, ծնունդ, հաշմանդամություն, տարիք կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներ: Նոր օրենսգրքի 330-րդ հոդվածով սահմանված են հետևյալ պաշտպանվող հատկանիշները՝ ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագում, կրոն, քաղաքական կամ այլ հայացքներ, անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներ:

Նկատի ունենալով, որ «անձի հանրային գործունեությունն» ուղղակիորեն նախատեսված չէ ինչպես նոր օրենսգրքի 330-րդ, այնպես էլ նախկին օրենսգրքի 226.2 հոդվածներով՝ նման որակման պարագայում առանցքային է, որ դատարանը հիմնավորի իր այն եզրահանգումը, որ «անձի հանրային գործունեությունը» կարող է նույն հոդվածների իմաստով համարվել «անձնական կամ սոցիալական բնույթի հատկանիշ»:

4 մեղադրական դատավճռով հաստատված է համարվել, որ անձը կատարել է իրեն մեղսագրվող արարքը՝ պայմանավորված քաղաքական և այլ հայացքներով: Միաժամանակ, նշված դատավճիռներով անդրադարձ չի կատարվել այն հանգամանքին, թե որոնք են «այլ հայացքները», չի վերլուծվել անձի խոսքի բովանդակությունը, նրա այլ գործունեությունը կամ այլ հանգամանքները, որոնք կփաստեն «այլ հայացքների» առկայության մասին, ինչպես նաև այն մասին, որ մեղադրյալը հանցանքը կատարելիս առաջնորդվել է այդ հայացքներով:

Մեղադրական դատավճիռներից մեկով առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը թեև որոշակիորեն անդրադարձել է Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածին և դրա առնչությամբ Եվրոպական դատարանի դիրքորոշումներին, սակայն առավելապես չի անդրադարձել հենց ատելության խոսքին առնչվող՝ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին: Միաժամանակ, դատարանը գնահատել է արված խոսքը Ռաբաթի գործողությունների ծրագրով և Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքով ամրագրված մի շարք հանգամանքների լույսի ներքո: Նույն գործով վերաքննիչ դատարանը որոշմամբ առավելապես վերահաստատել է առաջին ատյանի դատարանի եզրահանգումները:

Առաջին ատյանի դատարանն անդրադարձել է հրապարակման բավականին լայն տարածմանը, այդ թվում դիտարկել, թե որ լսարանի շրջանակներում է այն տարածում ստացել և ինչպիսի լսարան է ունեցել այն համացանցային էջը, որով հոդվածը հրապարկվել է՝ այդպիսով գնահատելով հրապարակմամբ թշնամանք տարածելու հավանականությունը և դրանից բխող՝ անձի դիտավորության առկայությունը:

Այս համատեքստում որոշ չափով դիտարկվել է նաև ընդհանուր սոցիալական կոնտեքստը. արձանագրվել է, որ ամբաստանյալը գրառումը կատարել է անափսի իրադարձությունից կարճ ժամանակ հետո, որը մեծ արձագանք է ստացել ամբողջ աշխարհում:

Դատավճռով, միաժամանակ, անդրադարձ չի կատարվել այն հանգամանքին, որ չնայած ամբաստանյալը մեծ թվով հետևորդներ ուներ սոցիալական ցանցում, նրա կատարած այլ հրապարակումները բավականին սակավաթիվ արձագանքի էին արժանացել, և դրա լույսի ներքո չի դիտարկվել ամբաստանյալի պնդումն առ այն, որ ինքը չէր կարող ենթադրել, որ հենց այս հրապարակումը նման տարածում կստանա:

Անդրադառնալով ամբաստանյալի այն պնդմանը, որ հրապարակումը կատարվել է քաղաքական երգիծանքի ժանրում՝ դատարանը վերլուծել է հոդվածի բովանդակությունը, ոճը, այն հանգամանքը՝ ինչ տեսքով էր հրապարակումը տեսանելի լինելու սոցիալական ցանցի օգտատերերին, և արդյոք ընթերցողին կարող էր ընկալելի լինել, որ հոդվածը կատարված է քաղաքական երգիծանքի ժանրում:

Միաժամանակ, դատավճիռը չի պարունակել հրապարակման բովանդակության մանրամասն վերլուծություն և չի նշվել, թե ինչ հանգամանքներից ելնելով է դատարանը գնահատված համարում, որ հրապարակումը պարունակում է թշնամանք հարուցող խոսք: Դատավճռով միայն արձանագրվել է, որ հրապարակման «բովանդակությունից միանշանակ բխում են (...) թշնամանք հարուցելու, ատելություն սերմանելու (...) հանգամանքները»՝ այդպիսով կրկնելով դատալեզվաբանական և դատահոգեբանական փորձաքննության եզրակացությամբ տեղ գտած արձանագրումը:

Այս առնչությամբ հարկ է նկատի ունենալ Եվրոպական դատարանի դիրքորոշումն առ այն, որ արտահայտման ազատությանն առնչվող խոսքի գնահատումը չպետք է սահմանափակվի փորձաքննության եզրահանգումներով՝ առանց բացատրելու, թե ինչու են կոնկրետ արտահայտությունները համարվել ատելություն և թշնամանք հրահրող:³⁶

Դատավճիռն, այսպիսով, պարունակում է միջազգային ստանդարտներից բխող որոշակի հանգամանքներին վերաբերելի վերլուծություն, միաժամանակ, հրապարակման բովանդակության վերլուծությունը սահմանափակվում է փորձաքննության եզրահանգումներով, իսկ խոսքի տարածվածությունը դիտարկելիս հաշվի է առնվում խոսքի հեղինակի հետևորդների քանակը, և չի գնահատվում կամ դիտարկվում այն արձագանքը, որը ունեցել էին ամբաստանյալի այլ հրապարակումները:

3 մեղադրական դատավճռով վկայակոչվել են «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի, Եվրոպական կոնվենցիայի և Սահմանադրության՝ կարծիքի արտահայտման ազատության վերաբերյալ դրույթները, ինչպես նաև Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը, և շեշտադրվել է Եվրոպական դատարանի կողմից սույն ուսումնասիրության շրջանակներում ևս նշված մի շարք հանգամանքները հաշվի առնելու կարևորությունն ատելության խոսքի գնահատման հարցում (հանրության վրա ազդեցության աստիճանը, իրական վտանգի առկայությունը, խոսքի հեղինակի դիրքը հասարակության մեջ, խոսքի հասցեատերերը, խոսքի ձևն ու բովանդակությունը):

Դատավճիռներով անդրադարձ է կատարվել նաև «Ատելության խոսքի վերաբերյալ» Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ R (97) 20

³⁶ Տագիևը և Հուսեյնովն ընդդեմ Ադրբեջանի (Tagiyev and Huseynov v. Azerbaijan) գործով 2019 թվականի դեկտեմբերի 5-ի վճիռը, դիմում no. 13274/08, §§ 46-48

հանձնարարականին, ՌԱԵՅ ընդհանուր քաղաքականության թիվ 15 հանձնարարականում տեղ գտած որոշ արձանագրումների, ներառյալ առ այն, որ քրեական պատասխանատվությունը պետք է կիրառվի ատելության խոսքի ծայրահեղ դրսևորման դեպքում:

Դատավճիռներով դիտարկել է հրապարակման հասանելիությունը. երկու դեպքում այն գնահատվել է հրապարակման հեղինակի՝ սոցիալական ցանցում ունեցած հետևորդների քանակով, իսկ մեկ դեպքում՝ այն հանգամանքով, որ հրապարակումը հասանելի է եղել սոցիալական ցանցի բոլոր օգտատերերին (այլ խոսքերով՝ ամբաստանյալը չի սահմանափակել հրապարակման հասանելիության շրջանակը), ինչով հիմնավորվել է նաև դիտավորության առկայությունը: Միաժամանակ, գործերից մեկով հետևորդների թվին զուգահեռ չի քննարկվել այն, թե ինչ արձագանք են սովորաբար ստացել ամբաստանյալի հրապարակումները, քանի դիտում են ունեցել, քանի անձ է դրանք հավանել, մեկնաբանել կամ որևէ այլ կերպ արձագանքել: Չի նշվել նաև, թե ինչպիսի արձագանք է ստացել խնդրո առարկա հրապարակումը:

Մյուս դատավճիռներով կարևորվել է նաև այն, որ հրապարակումներին արձագանքել են անձինք՝ կատարելով տարբեր մեկնաբանություններ՝ ինչից ելնելով դատարանները եզրահանգել են, որ ամբաստանյալների գրառումները հանրության որոշակի շրջանակի վրա ունեցել են ազդեցություն: Միաժամանակ, դատավճիռներից մեկով չի ներկայացվել նշված մեկնաբանությունների բովանդակությունը, իսկ մյուս դեպքում բովանդակությունը թեև ներկայացվել է, սակայն չի վերլուծվել: Երկու դեպքում էլ չի հստակեցվել հրապարակման «ազդեցության» բնույթը անձանց վրա: Բացի այդ, դատավճիռներից մեկով չի քննարկվել նաև այն, որ հրապարակմանը արձագանքել են սակավաթիվ անձինք. այն ունեցել է 4 մեկնաբանություն և մեկ հոգի կիսվել է գրառմամբ:

Հարկ է նկատել, որ նշված 3 դատավճիռներով չի քննարկվել հրապարակման պահին առկա սոցիալական իրավիճակը, չնայած նրան, որ երկու դեպքում դատարանները հաստատված են համարել, որ ամբաստանյալներն արարքը կատարել են՝ օգտագործելով Հայաստանի Հանրապետությունում հետպատերազմյան իրադրությամբ պայմանավորված հասարակության մոտ առկա տրամադրությունները և սոցիալ-հոգեբանական խոցելի իրավիճակը:

Դատավճիռներից երկուսով արձանագրվել է, որ մեղադրյալը քաղաքական գործիչ չէ և չի զբաղվել քաղաքականությամբ, միաժամանակ, չի քննարկվել, թե արդյոք անկախ անձի քաղաքական գործիչ չլինելու հանգամանքից, խոսքը կարող է դիտարկվել որպես քաղաքական քննադատություն կամ հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցի շուրջ քննարկմանը մասնակցություն, թե ոչ: Նշված դատավճիռներից մեկով նաև մեղադրյալի հրապարակումը չի դիտարկվել այն համատեքստում, որ վերջինս այդ հրապարակմամբ երթի գնալու կոչ էր արել:

Ուսումնասիրված 4 արդարացման դատավճիռներով վկայակոչվել են Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի դրույթները, ներկայացվել են Եվրոպական դատարանի՝ քաղաքական գործիչների և քաղաքական բանավեճի շրջանակներում արտահայտվելու ազատության իրավունքի սահմանափակմանը վերաբերելի նախադեպային իրավունքը, ինչպես նաև Ռաբաթի գործողությունների ծրագրով սահմանված՝ ատելության խոսքի գնահատման չափանիշները: 2 դատավճռով անդրադարձ է կատարվել նաև ՌԱԵՅ թիվ 15 ընդհանուր քաղաքականության հանձնարարականին՝ հատկապես ընդգծելով հանձնարակականի դրույթն առ այն, որ

ատելության խոսքի համար նախատեսված քրեական պատասխանատվության միջոցները չպետք է օգտագործվեն պետական քաղաքականության քննադատությունը կամ քաղաքական ընդդիմությանը ճնշելու նպատակով:

Նշված քրեական գործերից 2-ով ամբաստանյալը քաղաքական գործիչ, քաղաքական կուսակցության ղեկավար, իսկ 1-ով՝ քաղաքական կուսակցության անդամ է եղել: Այս հանգամանքը երեք դեպքում էլ հաշվի է առնվել և կարևորվել է դատարանների կողմից:

Նշված քրեական գործերից մեկով առաջին ատյանի դատարանն արձանագրել է, որ նախաքննության մարմինը պատշաճ կերպով չի գնահատել մեղադրյալի անձն ու հասարակությունում նրա ունեցած դերը, իսկ վերաքննիչ դատարանն ընդգծել է, որ էական նշանակություն ունի այն, որ քննության առարկա ելույթը կատարվել է նախընտրական ժամանակահատվածում: Վերաքննիչ դատարանը իր այս դիրքորոշումը հիմնավորվել է՝ անդրադառնալով ՀՀ Սահմանադրական դատարանի 2021 թվականի հուլիսի 17-ի թիվ ՍԴՈ-1606 որոշմանը, համաձայն որի՝ 2021 թվականի հունիսի 20-ի ԱԺ արտահերթ ընտրություններին նախորդած ժամանակահատվածում քաղաքական գործիչների հրապարակային խոսքում օգտագործվել են «անթույլատրելիորեն ցածր մշակութային և հանրային՝ բարոյական տեսանկյունից դատարապարտելի արտահայտություններ», ինչը առկա է եղել մրցակցող մի շարք քաղաքական ուժերի և դրանց ներկայացուցիչների խոսքում, չի կարող վերագրվել միայն մեկ քաղաքական ուժի և դարձել է Հայաստանում քաղաքական խոսքի մշտական բաղադրիչ:

Վերաքննիչ դատարանը, այսպիսով, խոսքը որպես բռնության հրահրում որակելու հարցում կարևորել է Հայաստանում առկա քաղաքական մշակույթը և այն, թե որքանով է կոնկրետ բնույթի արտահայտությունների օգտագործումը բնորոշ հայկական քաղաքական բանավեճին:

Արդարացման դատավճիռներից 3-ով նշվել է, որ ամբաստանյալների ելույթները կամ գրառումը, իրենց ամբողջության մեջ, չեն կարող համարվել բռնության հրահրում կամ բռնությունը հրապարակայնորեն արդարացնող կոչեր և ատելության խոսք: Միաժամանակ, նշված դատավճիռներից միայն մեկով է դատարանն առավել մանրամասն անդրադարձել խոսքի բովանդակությանը և վերլուծել այն՝ շեշտելով, որ մեղադրյալի օգտագործած արտահայտություններից պարզ է դառնում, որ վերջինս ոչ միայն բռնության կոչ չի օգտագործել, այլ նաև հակառակը՝ չի խրախուսում բռնությունը:

Մյուս երկու դատավճիռներից մեկով նման եզրահանգումը դատարանը հիմնավորվել է այն հանգամանքով, որ նախաքննության ընթացքում ձեռք չի բերվել այնպիսի փաստական տվյալ, որ ամբաստանյալը իրականում բռնություն կիրառելու դիտավորություն է ունեցել, ուստի նրա գործողություններն ու արված հայտարարություններն իրենց բնույթով չեն կարող ներկայացնել հասարակական վտանգավորություն: Այս առնչությամբ հարկ է նկատել, որ անձի՝ բռնություն գործադրելու դիտավորության բացակայությունը չի բացառում նրա ցանկությունը՝ հրահրելու բռնություն: Ավելին, անհրաժեշտ է հաշվի առնել, որ քննարկվող հանցակազմը ձևական է, ուստի բռնություն գործադրելու կամ նման դիտավորություն ունենալու հանգամանքը, որպես այդպիսին, էական նշանակություն չունի արարքի որակման համար:

Դատավճռով նաև խոսքը դիտարկվել է իր ամբողջության մեջ և արձանագրվել է, որ ամբաստանյալը ոչ թե բռնություն է հրահրել, այլ կանխատեսումներ կատարել հետագա զարգացումների վերաբերյալ:

Մյուս դատավճռով նման եզրահանգումը պատճառաբանվել է ամբաստանյալի անձով (վերջինս ելույթ է ունեցել որպես քաղաքական կուսակցության նախագահ՝ ներկայացնելով իր կուսակցության հայացքները), ինչպես նաև նրանով, որ ելույթն առնչվել է ընդհանուր հետաքրքրությունն ներկայացնող հանրային նշանակության քաղաքական հարցերի:

Միաժամանակ, չեն քննարկվել ամբաստանյալների խոսքի բովանդակությունը և ոճը, չեն վերլուծվել դրա առանձին հատվածները կամ խոսքը՝ ամբողջությամբ, չի քննարկվել, թե մեղադրանքում որպես բռնության կոչ դիտարկված կոնկրետ արտահայտությունները ինչ հանգամանքների բերումով է, որ չեն կարող ընկալվել որպես բռնության արդարացում:

Նշված գործով վերաքննիչ դատարանն առավել մանրամասն է դիտարկել գործի որոշ հանգամանքները, մասնավորապես, քննարկել է մեղադրյալի ելույթի բովանդակությունը, դիտարկել ելույթի ամբողջ համատեքստը, արձանագրել կատարված առանձին արտահայտությունների նշանակությունը և դրանք կատարելու նպատակը:

Արդարացման դատավճիռներից մեկով նաև նշվել է, որ կատարված գրառումը վերաբերել է հետպատերազմյան ներքաղաքական իրավիճակին, միաժամանակ, նշված արձանագրմանը չի հաջորդել առկա սոցիալական իրադրության վերլուծությունը: Դատարանը նաև չի դիտարկել խոսքը հետպատերազմյան շրջանում պետական մարմինների և պաշտոնատար անձանց նկատմամբ գործադրված բռնարարքների համատեքստում, չի քննարկել՝ արդյոք առկա է ողջամիտ հավանականություն, որ խոսքը կարող էր բռնություն հրահրել՝ նկատի ունենալով, որ այն կատարվել է 2020 թվականի դեկտեմբերի 21-ին:

Եզրափակիչ դատական ակտերի ուսումնասիրությունը թույլ է տվել արձանագրել նաև բռնություն գործադրելու հրապարակային կոչերի, բռնությունը հրապարակայնորեն արդարացնելու կամ քարոզելու հանցակազմի մեկնաբանության որոշ վարույթներով դրսևորված առանձնացող մոտեցումը:

Այսպես, երկու քրեական վարույթի շրջանակներում դատարանները համարել են, որ քննարկվող հանցակազմի պարտադիր հատկանիշ է հանդիսանում բռնություն գործադրելու հրապարակային կոչերի, նման բռնության հրապարակայնորեն արդարացման կամ քարոզի իրական լինելը կամ բռնություն գործադրելու իրական վտանգի առկայությունը: Իրական վտանգը դատարանները մեկնաբանել են որպես հանցավորի այնպիսի վարքագծի դրսևորում, երբ վերջինս ոչ թե միայն ձևականորեն հայտարարում է, որ անհրաժեշտ է անձի կամ անձանց խմբի նկատմամբ բռնություն գործադրել, այլ այդպիսի հայտարարության հետ մեկտեղ նաև փորձում է տարբեր եղանակներով ազդել անձանց գիտակցության և կամքի վրա:

Դատարանները, միաժամանակ, չեն պարզաբանել, թե ինչպիսի «եղանակներով» կարող է դրսևորվել անձանց գիտակցության և կամքի վրա ազդեցությունը:

Դատական ակտերից մեկով նշվում է, որ կոչերի իրական լինելը հավաստելու համար կարևոր է ինչպես տուժողի սուբյեկտիվ ընկալումը, այնպես էլ օբյեկտիվ իրադրությունը, իսկ օբյեկտիվ իրադրության գնահատումը ենթադրում է, որ անհրաժեշտ է հաշվի առնել այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են կոչերի բովանդակությունը, կոչով դիմելու եղանակը, այդ թվում նաև՝ հրապարակային լինել կամ չլինելը, ժամանակը, դրանք հանրությանը հասու դարձնելու համար տարաբնույթ միջոցների ձեռնարկումը, հանցավորի և տուժողի միջև հարաբերությունների բնույթը, հանցավորի անձը, հասարակությունում ունեցած դերը, զբաղեցրած

պաշտոնը, հանրության վրա հնարավոր ազդեցությունն գործադրելու ունակությունը և այլն:

Անձանց գիտակցության և կամքի վրա ազդեցությունը կարևորվել է ևս երկու դատավճռով, որոնցով սակայն չի նշվել, որ այս հանգամանքը պետք է դիտարկել որպես հանցակազմի պարտադիր տարր:

Դատարանների մեկնաբանություններից կարող ենք եզրակացնել, որ նրանց նման դիրքորոշումը որոշակիորեն բխում է «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» թիվ ՅՕ-231-Ն օրենքի հիմնավորումից, որով նշվել է, որ կոչեր ասելով պետք է հասկանալ *անձանց գիտակցության և կամքի վրա այնպիսի ազդեցություն*, որն ուղղված է անձի կամ անձանց խմբի նկատմամբ բռնություն գործադրելուն:

Կարծում ենք, որ դատարանների կողմից «իրական վտանգ» կամ «իրական կոչ» բնորոշված հանգամանքի դիտարկումը կարող է նշանակություն ունենալ անձի դիտավորության առկայության գնահատման տեսանկյունից:

Այսպես, այն, թե արդյոք անձը ձևականորեն հնչեցնում է որոշակի արտահայտություններ, որոնք կարող են նման լինել բռնության հրահրմանը, թե իսկապես ցանկանում է իր խոսքով ազդել անձանց կամքի և գիտակցության վրա՝ հանգեցնելով բռնության կիրառման, ուղղակիորեն կապակցված է վերջինիս դիտավորության առկայության հետ:

Միաժամանակ, կարծում ենք, որ «անձանց գիտակցության և կամքի նկատմամբ ազդելու» պահանջը չի կարող մեկնաբանվել այնպես, որ հանցավորը պետք է բացի կոչը հնչեցնելուց այլ գործողություններ ևս ձեռնարկած լինի՝ ուղղված անձանց կամքի վրա ազդելուն: Հակառակ պարագայում կստացվի, որ հանցակազմի պարտադիր տարր է հողվածի դիսպոզիցիայում չնշված արարքների կատարումը:

Հատկանշական է, որ արդարացման դատավճիռներով արձանագրվել են նախաքննության մարմնի գործունեության, մասնավորապես՝ մեղադրյալ ներգրավելու որոշման և մեղադրական եզրակացության բովանդակության հետ կապված մի շարք խնդիրներ: Այսպես, նշվել է, որ անձին առաջադրված մեղադրանքն անորոշ է. մեղադրյալ ներգրավելու մասին որոշման ու մեղադրական եզրակացության որոշ ձևակերպումները վերացական բնույթի են, իսկ մի շարք հանգամանքների մասին տեղեկությունն առհասարակ բացակայում է՝ ինչպես օրինակ, 2 քրեական վարույթի պարագայում, տեղեկությունն առ այն՝ թե ով և ինչ նպատակով է youtube.com համացանցային կայքում տեղադրել այն տեսանյութը, որի հիման վրա կառուցվել է մեղադրանքը, և արդյոք մեղադրյալը տեղյակ է եղել, որ իր ելույթը տեսանկարահանվում է:

Դատավճիռներից երկուսով նաև արձանագրվել է որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման մեջ հանցագործության տեղի ու դրա ժամանակի մասին նշումի բացակայությունը, ընդ որում, նշված դեպքերից մեկում ըստ դատարանի՝ նախաքննության մարմինը որևէ գործողություն չի ձեռնարկել դրանք բացահայտելու ուղղությամբ, թեև վերջինիս տիրապետման ներքո առկա են եղել այնպիսի տվյալներ, որոնցով կարելի էր հստակ որոշել և ամրագրել ենթադրյալ հանցագործության տեղն ու ժամանակը:

Նշված գործերից երեքով առաջին ատյանի դատարանի դատավճռով, իսկ մեկով՝ վերաքննիչ դատարանի որոշմամբ արձանագրվել է նաև, որ ըստ մեղադրանքի՝ անձը ենթադրյալ արարքը կատարել է քաղաքական և այլ հայացքներով պայմանավորված,

սակայն չի հստակեցվել կամ բացահայտվել, թե որոնք են «այլ հայացքները» և ինչ բնույթի են:

Մեղադրանքի անորոշության գնահատման շրջանակներում դատարանները նաև անդրադարձել են խոսքը կատարելու պահին սոցիալական համատեքստի չբացահայտմանը և անհստակությանը:

Նշված հանգամանքների հաշվառմամբ՝ դատարաններն արձանագրել են, որ մեղադրանքը ձևակերպելիս վարույթն իրականացնող մարմինը սահմանափակվել է միայն քրեական օրենքով արգելված արարքի ընդհանրական նկարագրությամբ, ինչով խախտել է մեղադրյալի պաշտպանության իրավունքը:

Դատարանները նման եզրահանգման են եկել՝ հիմնվելով Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքի վրա: Այսպես, *Արկադի Պասյանի գործով* որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է «մեղադրանքի ձևակերպում» եզրույթի բովանդակությանը՝ նշելով, որ «(...) «մեղադրանքի ձևակերպում» եզրույթ[ի] կառուցվածքն իրենից ներկայացնում է.

ա) գործով հաստատված, հանրության համար վտանգավոր և հակաիրավական փաստերը, որոնք համապատասխանում են կոնկրետ հանցակազմի հատկանիշներին,

բ) քրեական օրենքի կոնկրետ նորմը, որի հատկանիշներին համապատասխանում են մեղադրյալի գործողությունները կամ անգործությունը կազմող փաստերը:

Վերոնշյալ դատողության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեղադրանքի ձևակերպումը պետք է արտացոլի մեղսագրվող գործողությունների կամ անգործության բովանդակությունը, հետևաբար պետք է ներառի հանցակազմի բոլոր պարտադիր հատկանիշները բնութագրող փաստական տվյալները: Փաստական տվյալների ներառումն անհրաժեշտ նախապայման է, որպեսզի մեղադրանքի մեջ նշվի այն քրեական օրենքը, որով նախատեսված են հանրության համար վտանգավոր, հակաիրավական և քրեորեն պատժելի արարքի հատկանիշները, այսինքն՝ հանգեցնի մեղադրանքում ձևակերպված արարքին համապատասխան իրավաբանական գնահատական տալուն:

Վճռաբեկ դատարանի կողմից մեղադրանքի ձևակերպման կարևորումը պայմանավորված է այն հանգամանքով, որ համապատասխան դատավարական փաստաթղթերում (անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշում, մեղադրական եզրակացություն) դրա առկայությունը հնարավորություն է տալիս քրեական հետապնդման ենթարկվող անձին արդյունավետ կերպով իրականացնել իր պաշտպանության իրավունքը: (...)»:³⁷

Գևորգ Ճաղարյանի և մյուսների գործով որոշմամբ մեղադրանքի ձևակերպումը դիտարկելով որպես արդար դատաքննության իրավունքի ապահովման միջոց՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ «(...) [Դ]րանում, բացի հանցավորի մասին տվյալներից, հանցագործության տեղից, ժամանակից և եղանակից, մանրամասնորեն և հստակ պետք է նշվեն արարքի քրեաիրավական որակման հիմքում ընկած փաստերը՝ հանցագործության դեպքի և դրա հետ կապված հանգամանքների մանրակրկիտ նկարագրությունը: Արդար դատաքննության հիմնարար իրավունքի իրացման առումով անընդունելի է, երբ իրավասու պաշտոնատար անձը համապատասխան դատավարական փաստաթղթերում մեղադրանքը ձևակերպելիս

³⁷ Տե՛ս Արկադի Պատվականի Պասյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2010 թվականի սոյեմբերի 5-ի թիվ ՏԴ/0115/01/09 որոշման 18-19-րդ կետերը

սահմանափակվի միայն քրեական օրենքով արգելված արարքի ընդհանրական
սկարագրությամբ: (...)

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված պահանջների պահպանմամբ
մեղադրանքը ձևակերպելու դեպքում միայն առաջադրված մեղադրանքը
հնարավորություն կտա մեղադրյալին պատշաճ կերպով իրականացնել իր
պաշտպանության իրավունքը, ինչպես նաև կապահովվի կողմերի դատավարական
իրավահավասարությունը՝ սեփական դիրքորոշումը հիմնավորելու և մյուս կողմի
փաստարկները հերքելու համար: Նշված սկզբունքներից ցանկացած շեղում
կհանգեցնի արդար դատաքննության հիմնարար արժեքի առարկայազրկման»³⁸:

Վերոգրյալից ելնելով՝ կարող ենք արձանագրել, որ արդար դատաքննության
իրավունքի ապահովման տեսանկյունից առանցքային նշանակություն ունի անձի
մեղադրանքի պատշաճ ձևակերպումը՝ մանրամասնորեն և հստակ ներկայացնելով
հանցակազմի բոլոր հատկանիշները բնութագրող փաստական տվյալները և
չսահմանափակվելով քրեական օրենքով արգելված արարքի ընդհանրական
սկարագրությամբ:

Ամփոփելով՝ կարող ենք արձանագրել, որ ուսումնասիրված դատական ակտերի
զգալի մասով դատարաններն անդրադարձ չեն կատարել Ռաբաթի
գործողությունների ծրագրով նախատեսված և Եվրոպական դատարանի
նախադեպային իրավունքից բխող հանգամանքներին, և իրենց վերլուծությունը
կառուցել են ընդհանրական բնույթի դատողությունների վրա:

Այն պարագայում, երբ դատարանները վկայակոչել են վերաբերելի միջազգային
ստանդարտներն ու Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը, որոշ
դեպքերում դատական ակտում ներառված փաստական հանգամանքների
վերլուծությունն այնուամենայնիվ ընդհանրական բնույթի է եղել, բացի այդ, առանձին
դեպքերում դատարանները դիտարկված հանցակազմերի պարտադիր հատկանիշ են
համարել անձանց կամքի և գիտակցության վրա ազդեցություն գործելուն ուղղված
միջոցների ձեռնարկումը, ինչը որոշ դեպքերում կարող է հանգեցնել խնդրահարույց
մեկնաբանությունների: Դիտարկված 19 քրեական վարույթներից 5-ով
դատարաններն առավել համապարփակ կերպով են անդրադարձել ատելության
խոսքի գնահատման պարագայում կարևորություն ներկայացնող չափանիշներին:

Դատարանները արձանագրել են նաև նախաքննության մարմնի թերացումներ՝
մասնավորապես, մեղադրանքի ձևակերպման և դրա շրջանակներում վերաբերելի
փաստական հանգամանքներին պատշաճ անդրադարձի կատարման տեսանկյունից:

Նախաքննական մարմինների և դատախազության գործունեության
տեսանկյունից ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ քննարկվող
հոդվածներով քրեական վարույթ է նախաձեռնվել գլխավորապես քաղաքական
բնույթի խոսքի շրջանակներում արված արտահայտությունների համար: Կարծում
ենք, որ այս հանգամանքը և դրա պատճառները լրացուցիչ ուսումնասիրման կարիք
ունեն, միաժամանակ, անհրաժեշտ է իրականացնել հանրության առավել լայն
իրազեկում՝ ապահովելով քննարկվող հանցակազմերի մասին հանրության,
հատկապես՝ առավել խոցելի խմբերի ավելի լայն տեղեկացվածությունը:

Վերոգրյալի համատեքստում ուշադրության է արժանի Բարձրագույն դատական
խորհրդի կողմից ներկայացված տեղեկությունն առ այն, որ 2022 թվականի
ընթացքում չեն իրականացվել ՀՀ քրեական օրենսգրքի 329-330-րդ հոդվածներով

³⁸ Տե՛ս Գևորգ Ճաղարյանի և մյուսների գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի օգոստոսի 24-ի թիվ
ԵՇԴ/0002/01/11 որոշման 21-րդ կետը:

նախատեսված հանցանքների քննության կարողությունների զարգացմանն ուղղված վերապատրաստումներ³⁹:

Դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց, դատավորների⁴⁰, դատախազների⁴¹ և քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների)⁴² վերապատրաստման ծրագրերի ուսումնասիրությունը ևս վկայում է, որ դասավանդվող առարկաների ցանկում ներառված չէ ատելության խոսքի և բռնության կոչերի քննությանը նվիրված առանձին առարկա: Միաժամանակ, դատավորների և դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց ուսուցման ծրագրում ներառված են «Հավասարության ապահովման և խտրականության արգելքի վերաբերյալ արդի հարցեր», «Քրեական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումները, միջազգային դատարանների իրավակիրառ պրակտիկան և միջազգային համագործակցությունը» թեմաներով դասընթացներ, որոնք կարող են վերաբերել լինել քրեական օրենսգրքի 329-330-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների քննության կարողությունների զարգացման տեսանկյունից: Նմանապես, «Հավասարության ապահովման և խտրականության արգելքի վերաբերյալ արդի հարցեր» խորագրով դասընթացը ներառված է դատախազների տարեկան վերապատրաստման ուսուցման ծրագրում, իսկ քրեական իրավունքի ոլորտում Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իրավունքների պաշտպանության վերաբերյալ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին անդրադարձ է կատարվում ինչպես դատախազների, այնպես էլ քննիչների վերապատրաստման ծրագրերում: ՀՀ քննչական կոմիտեի քննիչների վերապատրաստման դասընթացի մոդուլը ներառում է նաև «Քրեական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման հարցերը» խորագրով դասընթացը, որի շրջանակներում ևս, կախված դասընթացի բովանդակությունից և դասընթացավարի կողմից նախապատրաստվող ուսուցման նյութերից, քննիչները կարող են ծանոթանալ կարծիքի արտահայտման ազատության վերաբերյալ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին, ներառյալ՝ ատելության խոսքի և բռնության հրահրման դեպքերի գնահատմանը վերաբերելի չափանիշներին:

Կարծում ենք, որ կարծիքի արտահայտման ազատության և ատելության ու բռնության հրահրմանն առնչվող գործերի քննության վերաբերյալ թիրախային վերապատրաստումների իրականացումը կնպաստի դատական պրակտիկայի լավարկմանը և ատելության ու բռնության հրահրման դեպքերի առավել արդյունավետ գնահատմանը:

³⁹ Տեղեկությունը ներկայացվել է ի պատասխան Մարդու իրավունքների պաշտպանի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 01/13.2/6352-2022 գրության:

⁴⁰ Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի 2022 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ ԿԽ-010/22 որոշում, հասանելի՝ <https://aoj.am/storage/full-time-education/training-program/j1Qix2lwN13Tt9V7tuXt3JytOWeYaz2oFYkQYoOq.pdf>

⁴¹ Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի 2022 թվականի դեկտեմբերի 15-ի ԿԽ-011/22/3 որոշում, հասանելի՝ <https://aoj.am/storage/full-time-education/training-program/wl8n8WCoWp4g4bVWq106WPieM0z3ZLT0hGhORS73.pdf>

⁴² ՀՀ քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովի 2023 թվականի ապրիլի 4-ի որոշում, հասանելի՝ <https://aoj.am/storage/full-time-education/training-program/CuGxaWBlijTMHdkZpeWiSnBLm72lZyTxe30bOTrRy.pdf>

ՀՀ քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովի 2023 թվականի հունիսի 1-ի որոշում, հասանելի՝ <https://aoj.am/storage/full-time-education/training-program/TcYdLw8D2aQ31wXlpUZl13MtxSONJ2W8d91aF5yJ.pdf>

ԵՉՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով սույն ուսումնասիրության արդյունքները՝ հարկ է արձանագրել հետևյալը.

1) Ատելության և բռնության հրահրման քրեականացումը բխում է ՀՀ միջազգային պարտավորություններից, մասնավորապես, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 20-րդ, «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի 4-րդ հոդվածների, Կիբերհանցագործությունների մասին կոնվենցիայի՝ համակարգչային համակարգերի միջոցով կատարվող ռասիստական և քսենոֆոբ բնույթի արարքների քրեականացման մասին լրացուցիչ արձանագրության դրույթներից, ինչպես նաև Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքից, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2022)16 հանձնարարականից և ՌԱԵՀ թիվ 15 ընդհանուր քաղաքականության հանձնարարականից: Միաժամանակ, նշված փաստաթղթերից բխում է նաև, որ քրեականացմանը զուգահեռ պետությունը պարտավոր է ապահովելու ատելության խոսքին վերաբերելի ներքին օրենսդրության արդյունավետ կիրառումը:

2) Ատելության և բռնության հրահրման համար պատասխանատվություն է նախատեսվում նախկին օրենսգրքի 226-րդ և 226.2 և նոր օրենսգրքի 329-330-րդ հոդվածներով: Նկատի ունենալով Ռաբաթի գործողությունների ծրագրով նախատեսված հանգամանքների ցանկը, որոնք պետք է հաշվի առնել ատելության խոսքի քննության ընթացքում, ինչպես նաև հիմնվելով Եվրոպական դատարանի՝ կարծիքի արտահայտման ազատության իրավունքի և ատելության հրահրման հարաբերակցությանը վերաբերելի նախադեպային իրավունքի վրա՝ կարծում ենք, որ պետք է առանձնացվեն վերոնշյալ հանցանքների քննության շրջանակներում առավել էական նշանակություն ունեցող հետևյալ հանգամանքները՝

- ա) խոսքի բովանդակությունը և ձևը,
- բ) սոցիալական իրադրությունը, որի պայմաններում խոսքն արվել է,
- գ) հանցավորի ուղղակի դիտավորության առկայությունը,
- դ) խոսքի հեղինակի անձը և կարգավիճակը հասարակությունում կամ խոսքի լսարանի շրջանում,
- ե) խոսքի տարածվածությունը,
- զ) թիրախավորված անձի կամ խմբի խոցելիության աստիճանը հայաստանյան հասարակությունում,
- է) արդյոք խոսքն առնչվում է հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցի կամ քաղաքական երկխոսության մաս է կազմում:

3) Ուսումնասիրված 19 քրեական գործից 17-ով անձին մեղադրանք է առաջադրվել քաղաքական բնույթի խոսքի ընթացքում հնչեցված կամ կիրառված արտահայտությունների՝ «քաղաքական կամ այլ հայացքներով» կամ «անձի հանրային գործունեությամբ» պայմանավորված բռնություն հրահրելու համար, ընդ որում, նշված գործերից 14-ի պարագայում անձին մեղսագրվել է խորհրդարանական մեծամասնությունը կազմող քաղաքական ուժի կամ դրա ներկայացուցիչների դեմ բռնության հրահրումը: 2 քրեական վարույթով քրեական հետապնդում է հարուցվել ընդդիմադիր քաղաքական ուժերի ներկայացուցիչների, մեկ քրեական վարույթով՝ ընդդիմադիր հայացքներ ունեցող քաղաքացիների նկատմամբ բռնություն հրահրելու համար (նշված գործով անձին մեղսագրվել է նաև ծնունդով պայմանավորված

անձանց խմբի նկատմամբ բռնություն կիրառելու կոչերը): Մյուս 2 քրեական վարույթով անձինք մեղադրվել են մի դեպքում ազգային, իսկ մյուս դեպքում՝ ազգային և կրոնական թշնամանք հարուցելու համար:

4) 19 քրեական վարույթի շրջանակներում կայացվել է 14 մեղադրական դատավճիռ, 4 արդարացման դատավճիռ և մեկ՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին որոշում: Մեղադրական դատավճիռներից 3-ը կայացվել է համաձայնեցման, 1-ը՝ արագացված վարույթի շրջանակներում:

5) Դիտարկված վարույթներից միայն 5-ով են դատարաններն ավելի համապարփակ անդրադարձ կատարել Ռաբաթի գործողությունների ծրագրով նախատեսված և Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքից բխող հանգամանքներին, այն դեպքում, երբ 1 վարույթի շրջանակներում կայացված դատական ակտով նշված հանգամանքներին անդրադարձ է կատարվել որոշ չափով:

Ընդհանուր դատական քննության կարգով կայացված 10 մեղադրական դատավճռից ավելի քան կեսը (6 դատավճիռ) չեն պարունակում Ռաբաթի գործողությունների ծրագրով սահմանված և Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքից բխող՝ ատելության և բռնության հրահրման գնահատման տեսանկյունից կարևորություն ներկայացնող չափանիշներին անդրադարձ և դրանց վերլուծություն: Նշված դատավճիռների՝ «Դատարանի իրավական վերլուծությունները» բաժինը պարունակում է միայն ընդհանրական ձևակերպումներ, որոնցով ամրագրվում է, որ դատարանը հաստատված է համարում ամբաստանյալի մեղավորությունն ապացուցված և արարքը ճիշտ որակված լինելու հանգամանքները:

6) Դատարանները գլխավորապես չեն դիտարկել խոսքի կատարման պահին առկա սոցիալական իրադրությունը՝ գնահատելով խոսքն այդ սոցիալական համատեքստի լույսի ներքո, չեն քննարկել՝ արդյոք խոսքն առնչվում է հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցի կամ կատարվել է քաղաքական բնույթի քննարկման շրջանակներում: Որոշ դեպքերում դատարանները շեշտել են, որ ամբաստանյալը քաղաքական գործիչ չէ և չի զբաղվում քաղաքական գործունեությամբ, սակայն չեն քննարկել, թե արդյոք՝ անկախ նշված հանգամանքից՝ ամբաստանյալի խոսքը կարող է համարվել քաղաքական քննադատություն: Շատ դեպքերում չեն վերլուծվել նաև խոսքի բովանդակությունը և ոճը, կիրառված առանձին արտահայտությունները և խոսքն իր ամբողջության մեջ, ինչպես նաև խոսքի նշանակությունը՝ ավելի լայն քննարկման շրջանակներում, երբ արտահայտություններն արվել են՝ արձագանքելով այլ անձի կամ լրատվամիջոցի հրապարակմանը:

7) Որպես կանոն, մանրամասն անդրադարձ չի կատարվել նաև ամբաստանյալի դիտավորությանը, չեն ներկայացվել և վերլուծվել այն հանգամանքները, որոնցից ելնելով՝ հաստատված է համարվել, որ արարքը կատարվել է ուղղակի դիտավորությամբ, չեն քննարկվել ամբաստանյալի հուզական վիճակը, այն՝ արդյոք վերջինիս կողմից կոնկրետ արտահայտությունների կիրառումը սովորական խոսքում բնորոշ է նրան, թե ոչ, և այլն:

8) Խոսքի տարածվածությունը գլխավորապես գնահատվել է՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ անձը, հրապարակումը կատարելով, այն հասանելի է դարձրել սոցիալական ցանցի բոլոր օգտատերերին: Որոշ դեպքերում նաև հաշվի է առնվել ամբաստանյալի հետևորդների քանակը: Միաժամանակ, միայն մեկ գործի շրջանակներում է, որ դատավճռով շեշտվել է, որ հրապարակումը դիտվել, հավանության է արժանացել, տարածվել և մեկնաբանվել է բազմաթիվ անձանց

կողմից, մյուս դեպքերում դատարանները չեն անդրադարձել այն հանգամանքին, թե անկախ տեսական լայն հասանելիությունից՝ գործնականում հրապարակումը քանի անձի կողմից է դիտվել, հավանության արժանացել, մեկնաբանվել, ինչպիսի արձագանք է ստացել և այլն: Դատավճիռներից մեկով արձանագրվել է հրապարակման արձագանքների քանակը, ինչից հնարավոր է եզրակացնել, որ այն նվազ տարածում է ստացել, սակայն նշված հանգամանքն ուշադրության չի արժանացվել և չի քննարկվել դատարանի կողմից: Բացի այդ, երկու դատավճռով նշվել է, որ խոսքն ազդեցություն է ունեցել հանրության որոշակի շրջանակի վրա, միաժամանակ, չի մանրամասնվել և վերլուծվել նշված ազդեցության բնույթը:

9) 3 վարույթով անձին մեղսագրվել է արարքի կատարումը տուժողի «հանրային գործունեությամբ», իսկ 4 վարույթով՝ «քաղաքական և այլ հայացքներով» պայմանավորված: Միաժամանակ, դատավճիռներով չի պարզաբանվել և հիմնավորվել, թե ինչ հանգամանքներից էլնելով է, որ «անձի հանրային գործունեությամբ պայմանավորված» նրա նկատմամբ բռնություն գործադրելու կոչ կատարելը կարող է որակվել որպես նախկին օրենսգրքի 226.2 կամ նոր օրենսգրքի 330-րդ հոդվածով նախատեսված արարք՝ նկատի ունենալով, որ նման պաշտպանվող հատկանիշ տվյալ հոդվածներով ուղղակիորեն նախատեսված չէ: Նմանապես, դատարանները չեն անդրադարձել այն հանգամանքին, թե որոնք են «այլ հայացքները», որոնք հանդիսացել են հանցանքի կատարման շարժառիթ:

10) Ուսումնասիրված 4 արդարացման դատավճռով անդրադարձ է կատարվել վերաբերելի միջազգային ստանդարտներին, այդ թվում՝ Ռաբաթի գործողությունների ծրագրին և Եվրոպական դատարանի վերաբերելի նախադեպային իրավունքին: Դատավճիռներից 3-ով գործի փաստական հանգամանքներ առավելապես գնահատվել և վերլուծվել են սույն ուսումնասիրության շրջանակներում ներկայացված չափանիշների կամ դրանց մի մասի լույսի ներքո:

11) 3 արդարացման դատավճռով կարևորվել և հաշվի է առնվել այն հանգամանքը, որ ամբաստանյալը քաղաքական գործիչ է կամ քաղաքական կուսակցության անդամ: Նշված գործերից մեկով վերաքննիչ դատարանը նաև առանցքային է համարել, որ խոսքը հնչեցվել է նախընտրական ժամանակահատվածում և Սահմանադրական դատարանի դիրքորոշման վկայակոչմամբ արձանագրել է, որ նման խոսքը բնորոշ է հայաստանյան քաղաքական մշակույթին: 2 դատավճռով վերլուծվել է կատարված խոսքը՝ կամ դրա առանձին բաղադրիչների հաշվառմամբ, կամ իր ամբողջական ընկալման տեսանկյունից: Արդարացման դատավճիռները ևս չեն պարունակել խոսքի կատարման պահին առկա սոցիալական իրադրության համապարփակ վերլուծություն:

12) 2 արդարացման և 2 մեղադրական դատավճռով կարևորվել է ամբաստանյալի կողմից անձանց կամքի կամ գիտակցության վրա ազդեցության գործումը, ընդ որում, նշված քրեական վարույթներից 2-ով դատարանները համարել են, որ հանցակազմի պարտադիր հատկանիշ է բռնություն գործադրելու հրապարակային կոչերի, նման բռնության հրապարակայնորեն արդարացման կամ քարոզի իրական լինելը կամ բռնություն գործադրելու իրական վտանգը, որը առկա է այն դեպքում, երբ հանցավորը ոչ միայն ձևականորեն հայտարարում է, որ անհրաժեշտ է անձի կամ անձանց խմբի նկատմամբ բռնություն գործադրել, այլ այդպիսի հայտարարության հետ մեկտեղ նաև փորձում է տարբեր եղանակներով ազդել անձանց գիտակցության և կամքի վրա:

13) Արդարացման դատավճիռներով արձանագրվել են նախաքննության մարմնի գործունեության, մասնավորապես՝ մեղադրյալ ներգրավելու որոշման և մեղադրական

եզրակացության բովանդակության հետ կապված մի շարք խնդիրներ, նշվել է, որ մեղադրանքի ձևակերպումը անորոշ է, վերացական, և բացակայում են որոշ հանգամանքներ, ինչպես, օրինակ, հանցագործության կատարման տեղն ու ժամանակը, տուժողի «այլ հայացքների» բնույթը, որոնք, ըստ մեղադրանքի, հիմք են հանդիսացել հանցանքի կատարման համար, և այլն:

Հիմնվելով վերոգրյալի վրա՝ առաջարկում ենք՝

1) մշակել նոր օրենսգրքի 329-330-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների քննության ուղեցույց-ձեռնարկներ,

2) վերանայել քննիչների, դատավորների և դատախազների վերապատրաստման դասընթացների նյութերը կամ մշակել նոր դասընթաց՝ առավել մանրամասն անդրադառնալով նշված հոդվածներով նախատեսված հանցանքների քննության մեթոդիկային և առանձնահատկություններին, ներառյալ՝ մեղադրական եզրակացության շրջանակներում անդրադարձ կատարելու տեսանկյունից կարևորություն ներկայացնող հանգամանքներին,

3) նշված նյութերի հիման վրա իրականացնել պարբերական վերապատրաստումներ,

4) իրականացնել նշված հանցանքների վերաբերյալ հանրության իրազեկում՝ հատկապես առավել խոցելի խմբերի շրջանում: